ոչ պաշտոնական թարգմանություն

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 5

2. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8

2.1. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ և արդյունավետ կառավարում 10

2.2. Ազատություն, շարժունակություն և անվտանգություն 28

2.3. Արտաքին և անվտանգության քաղաքականություն 37

2.4. Տնտեսական և ոլորտային համագործակցություն 45

2.5. Առևտուր և առևտրին առնչվող հարցեր 66

2.6. Մարդկանց միջև շփումներ 72

Եզրակացություն 79

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերին և ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 1-ին որպես Հայաստան-ԵՄ հարաբերություններին վերաբերող հիմնական փաստաթուղթ և Հայաստանի ժողովրդավարական հաստատությունների ստեղծման ծրագիր։

ԵՄ-ի և Հայաստանի միջև գործընկերությունը խթանելու համար 2018 թվականի փետրվարի 21-ին ընդունվել է **«Հայաստան-ԵՄ գործընկերության առաջնահերթություններ»** փաստաթուղթը։ Ընդհանուր շահերի և արժեքների վրա հիմնված Գործընկերության առաջնահերթությունները նպաստել են ՀԸԳՀ-ում սահմանված կանոնավոր քաղաքական երկխոսությունների նպատակով անցկացվող հանդիպումների և ոլորտային երկխոսությունների օրակարգի ձևավորմանը, ինչը հիմք է ստեղծում առաջնահերթությունների իրականացման և մշտադիտարկման համար։

2023 թվականի հոկտեմբերի 26-27-ին Եվրոպական խորհուրդը ԵՄ բարձր ներկայացուցչին և Հանձնաժողովին հրավիրել է ներկայացնելու տարբերակներ՝ առավել արդյունավետ ամրապնդելու **Հայաստան-ԵՄ հարաբերությունները բոլոր ուղղություններով**: Այս հանգամանքը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ Հայաստանի իշխանությունները հստակ ցանկություն են հայտնել ամրապնդելու Հայաստան-ԵՄ հարաբերությունները, ինչը նաև արտացոլված է «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքում: Այն նաև արտացոլում է ԵՄ-ի՝ այս պահն օգտագործելու և Հայաստան-ԵՄ հարաբերություններն ամրապնդելու մեծ ցանկությունը։ 2023 թվականի հոկտեմբերի 5-ին Գրանադայում տեղի ունեցած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի նախագահը և Հայաստանի վարչապետը նույնպես իրենց պատրաստակամությունն են հայտնել ամրապնդելու տնտեսական կապերը և օգտագործելու ՀԸԳՀ-ի ամբողջ ներուժը։ 2023 թվականի նոյեմբերի 13-ին Արտաքին

հարաբերությունների խորհուրդը համաձայնել է՝ i) ընդլայնել Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելությունը (ՀԵՄԱ)՝ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊՔ) ներքո՝ ավելացնելով դիտորդների և պարեկային շրջայցերի թիվն, այդ թվում՝ զգայուն տարածքներում, ii) դիտարկել Եվրոպական խաղաղության գործիքի (ԵԽԳ) շրջանակներում Հայաստանին ոչ մահաբեր սպառազինությունների տրամադրման աջակցության հնարավորությունը, iii) սկսել վիզաների ազատականացման շուրջ երկխոսություն մեկնարկելու հնարավորությունների ուսումնասիրությունը, և iv) սահմանել Հանձնաժողովի ծառայությունների և ԱԳԵԾ-ի համատեղ փաստահավաք առաքելության միջոցով լրացուցիչ աջակցության միջոցառումներ: Այդ պահից սկսած՝ այս գործողությունները հաջողությամբ են իրականացվել:

Փաստահավաք առաքելությունը հաստատել է համագործակցությունն ամրապնդելու երկու կողմերի ձգտումն, այդ թվում՝ այնպիսի նոր ոլորտներում համատեղ աշխատանքը, ինչպիսիք են անվտանգությունը և պաշտպանությունն, այնպիսի բնագավառներում առավել սերտ փոխգործակցությունը, ինչպիսիք են տրանսպորտը, էներգետիկան և թվային կապակցվածությունն, առևտուրը, հետազոտությունները և նորարարությունները, ինչպես նաև «Գլոբալ դարպասներ» նախաձեռնության շրջանակներում ներդրումների ավելացումը: Սա համապատասխանում է Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ բարձր ներկայացուցչի՝ «Սևծովյան տարածաշրջանի վերաբերյալ» ԵՄ-ի ռազմավարական մոտեցման մասին Եվրոպական խորհրդարանին և խորհրդին ուղղված՝ 2025 թվականի մայիսի 28-ի համատեղ հաղորդագրությանը: Հատուկ ուշադրություն կդարձվի նաև Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական գործողությունից հետո տեղահանված Ղարաբաղի հայերի (այսուհետ՝ տեղահանված հայեր և (կամ) փախստականներ) կարիքների բավարարմանը և սոցիալ-տնտեսական ներառմանը նպաստելուն:

Թե՛ Հայաստանը և թե՛ ԵՄ-ն հետաքրքրված և հանձնառու են հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու հարցում, **ինչը հաստատվել է Հայաստան-ԵՄ գործընկերության խորհրդի՝ 2024 թվականի փետրվարի 13-ին տեղի**

ունեցած հինգերորդ նիստի ընթացքում: Ըստ այդմ, **Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի** նպատակը բոլոր հարթություններում համագործակցության համար ավելի հավակնոտ համատեղ առաջնահերթություններ **սահմանելն է**՝ ՀԸԳՀ-ի նպատակները Հայաստանի ժողովրդի եվրոպական ձգտումներին համապատասխան իրականացնելու համար:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը փոխարինում է առկա Գործընկերության առաջնահերթությունները և վերաուղղորդում դրանք՝ հիմք ընդունելով ՀԸԳՀ-ն: Այստեղ տարբերակվում են կարճաժամկետ առաջնահերթություններ (որոնք ենթակա են իրականացման, կամ որոնց առումով պետք է զգալի առաջընթաց գրանցել 3-4 տարվա ընթացքում) և միջնաժամկետ առաջնահերթություններ (որոնք ենթակա են իրականացման, կամ որոնց առումով պետք է զգալի առանջընթաց գրանցել 7 տարվա ընթացքում): **Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը** կգործի Հայաստան-ԵՄ գործընկերության խորհրդի կողմից դրա ընդունման պահից: Այն կարող է փոփոխվել կամ թարմացվել ցանկացած ժամանակ՝ Գործընկերության խորհրդի համաձայնությամբ:

1. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հիմք ընդունելով համատեղ շահերը և ընդհանուր արժեքները՝ Հայաստան-ԵՄ գործընկերության սույն ռազմավարական օրակարգի իրականացման համար ուղենիշ կծառայեն հետևյալ սկզբունքները.

- Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի շրջանակներում ձեռնարկվող գործողությունները պետք է լիովին համապատասխանեն **ՀԸԳՀ-ին**, այդ թվում՝ դրա նախաբանին:
- Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը պետք է իրականացվի **թափանցիկ, հաշվետու և ներառական ձևով**:

- Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի համար պահանջվում են երկու կողմերի ներգրավվածություն և ՀԸԳՀ-ի հետ կապված **բարեփոխումների** վերաբերյալ երկխոսություն:
- Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի նպատակը **գործնական միջոցառումների** աստիճանական իրականացմամբ շոշափելի և նախասահմանված արդյունքների հասնելն է:
- Կողմերն ընդունում են քաղաքական հանձնառությամբ և պատշաճ **տեխնիկական ու ֆինանսական միջոցներով** համաձայնեցված առաջնահերթությունների իրականացմանն աջակցելու կարևորությունը:
- Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի **իրականացման** հետ կապված **մշտադիտարկում կանցկացվի**, դրա վերաբերյալ տարեկան հաշվետվություններ կներկայացվեն, և կիրականացվի վերջինի գնահատում: Կուսումնասիրվի դրա առաջընթացն, այդ թվում՝ ՀԸԳՀ-ում նշված ինստիտուցիոնալ կառույցների համատեքստում: Կխրախուսվի նաև քաղաքացիական հասարակության կողմից մշտադիտարկման գործունեության իրականացումը Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի նկատմամբ, այդ թվում՝ Հայաստան-ԵՄ քաղաքացիական հասարակության հարթակի շրջանակներում:
- ԵՄ-ն Հայաստանին կօգնի Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում սահմանված նպատակներն իրագործելու և առաջնահերթություններն իրականացնելու հարցում: ԵՄ-ն այդ ամենը կապահովի, կիրառելով **աջակցության** հասանելի բոլոր աղբյուրները, ինչպես նաև փորձը և խորհրդատվությունը, լավագույն գործելակերպը, տեղեկությունների փոխանակումը, կարողությունների զարգացմանն աջակցելը, ինստուտուցիոնալ ամրապնդումը և աջակցության գործիքները: ԵՄ-ն նաև կհամագործակցի համախոհ գործընկերների հետ՝ Հայաստանին տրամադրվող աջակցության համակարգումն ապահովելու և «Թիմ Եվրոպա» մոտեցման կիրառումն ապահովելու համար, որով միավորվում են ԵՄ-ի, դրա

անդամ պետությունների, Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) , Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ու այլ շահագրգիռ գործընկերների ռեսուրսները: ԵՄ-ի համապատասխան ֆինանսական գործիքները կնպաստեն Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի իրականացմանը: Այնուհանդերձ, Օրակարգն ինքնին ֆինանսական ծրագրային փաստաթուղթ չէ և չի փոխարինում կողմերի կազմված ծրագրերին:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը հանդիսանում է Հարևանության, զարգացման և միջազգային համագործակցության գործիքում (ՀԶՄՀԳ) և համապատասխան ծրագրային փաստաթղթերում սահմանված՝ Հայաստանին տրամադրվող **ԵՄ օժանդակության հիմքը**: ԵՄ-ն կարող է նաև օժանդակություն տրամադրել ԵՄ այլ գործիքների կիրառմամբ: ԵՄ աջակցությունը՝ հիմնված պայմանականության և խրախուսման մոտեցման վրա, պայմանավորված կլինի համաձայնեցված բարեփոխումների իրականացմամբ: Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում նշված առաջնահերթությունների իրականացմանը նպաստելու համար Եվրոպական հանձնաժողովը ներկայացրել է Հայաստանի համար **Դիմակայունության և աճի ծրագիրը**՝ 2024-2027 թվականների համար 270 միլիոն եվրո արժողությամբ օժանդակության փաթեթ: Դիմակայունության և աճի ծրագրի համաձայն՝ ԵՄ-ն կտրամադրի՝ 1) 200 միլիոն եվրո դրամաշնորհային օժանդակություն՝ սոցիալ-տնտեսական օրակարգին և ԵՄ-ի հետ առավել սերտ ոլորտային համագործակցությանն աջակցելու համար, և 2) 70 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհներ՝ առևտրի, էներգետիկայի և տրանսպորտային կապի ոլորտներում պետական և մասնավոր ներդրումները մոբիլիզացնելու և մասնավոր հատվածն ամրապնդելու նպատակով: Օժանդակությամբ նաև ամրապնդվում է Սևծովյան տարածաշրջանում ԵՄ ներգրավվածությունը, որն արտացոլված է Հանձնաժողովի և ԵՄ բարձր ներկայացուցչի՝ Սևծովյան տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի ռազմավարական մոտեցման վերաբերյալ համատեղ հաղորդագրության մեջ:

2. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՄ-ն բարձր է գնահատում Հայաստանի հանձնառությունը **ժողովրդավարությանը, օրենքի գերակայությանը և մարդու իրավունքներին**, ինչպես նաև այս ուղղությամբ զգալի առաջընթացը՝ հաշվի առնելով չափազանց բարդ տարածաշրջանային իրավիճակը, որին Հայաստանը ներկայումս առերեսվում է: Այն բարձր է գնահատում ժողովրդավարական հաստատությունների պատշաճ գործունեությունն ապահովելու Հայաստանի հանձնառությունը՝ ՀԸԳՀ-ն դիտարկելով որպես երկրի արդիականացմանն ուղղված բարեփոխումների պլան: Առանցքային առաջնահերթություններն են **սոցիալ-տնտեսական զարգացումն, առևտրի դիվերսիֆիկացումը, կայունությունը և դիմակայունության բարձրացումն**, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային մարտահրավերների հասցեագրումը, ինչպես նաև թիրախավորված հիբրիդային և այլ սպառնալիքների վերացումը: **Վիզայի ազատականացման շուրջ երկխոսությունը** ևս կարևոր համատեղ առաջնահերթություն է: Գործընթացի նպատակն է Հայաստանին աջակցել ԵՄ-ում և Շենգենյան գոտու սահմաններում կարճաժամկետ այցերի համար առանց վիզայի մուտքի ռեժիմ սահմանելու հարցում՝ պայմանով, որ ապահովվեն արդյունավետ կառավարվող շարժունակության և անվտանգության համապատասխան պայմանները: Հայաստանը **զգալի առաջընթաց** է արձանագրել այնպիսի առանցքային ոլորտներում **բարեփոխումների** իրականացման գործում, ինչպիսիք են արդարադատությունը, կոռուպցիայի դեմ պայքարը և օրենքի գերակայունության ապահովումը, խոսքի ազատությունը և ԶԼՄ-ների ազատությունը, ոստիկանության բարեփոխումները և ժողովրդավարական հաստատությունների ամրապնդումը (օրինակ՝ ստեղծելով Ներքին գործերի նախարարություն), ինչպես նաև կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, միգրացիայի և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում բարեփոխումների իրականացման առումով: **Տարածաշրջանի անվտանգային իրավիճակը** մնում է անկայուն: Հայաստան-ԵՄ գործընկերության սույն ռազմավարական օրակարգում, որպես համագործակցության նոր ոլորտ, ներառված

են **անվտանգությունը և պաշտպանությունը**, որոնց նպատակը Հայաստանի **դիմակայունությունն, անվտանգությունը և կայունությունը** բարձրացնելն է: Օրինակ՝ 2024 թվականին ԵՄ-ն Եվրոպական խաղաղության գործիքի շրջանակներում ընդունել է Հայաստանի զինված ուժերին աջակցություն տրամադրելու անդրանիկ միջոցառումը: Այս առումով ԵՄ-ն մշտապես պատրաստ է աջակցել Հայաստանին: Առաջիկա տարիներին անհրաժեշտ կլինի լրացուցիչ ուշադրություն դարձնել **ավելի քան 115 000 տեղահանված հայերի կարիքների բավարարմանը և նրանց՝ սոցիալ-տնտեսական համակարգում ներառմանը**:

Մարդու իրավունքները և գենդերային հավասարությունը կներառվեն Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում:

Հայաստան-ԵՄ գործընկերության այս ռազմավարական օրակարգը նպաստում է **տնտեսական, առևտրային և էներգետիկ դիվերսիֆիկացմանը** և առանցքային ոլորտներում **նորմատիվ իրավական ակտերի** հետագա **համապատասխանեցմանը** (եթե դրանք համատեղելի են Հայաստանի կողմից այլ միջազգային կազմակերպություններին անդամակցելու և ստանձնած պարտավորությունների հետ)՝ առավել սերտ տնտեսական համագործակցության համար պայմաններ ստեղծելու նպատակով: Դրա նպատակն է նաև ամրապնդել համագործակցությունն այն ոլորտներում, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայաստանի **սոցիալ-տնտեսական դիմակայունության** համար, ինչպես նաև ավելացնել **ներդրումները**:

Քաղաքացիներին ՀԸԳՀ-ի բոլոր առավելություններից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է հետագայում ապահովել **էական և կայուն առաջընթաց** ՀԸԳՀ-ի իրականացման գործընթացում: Մասնավորապես՝ Հայաստանը կշարունակի ջանքեր գործադրել ներքին համակարգման և կապիտալ ներդրումների հոսքի յուրացման կարողությունների բարելավման, ինչպես նաև բարեփոխումների ամրապնդման ուղղությամբ: ԵՄ-ն պատրաստակամ է խորացնել իր համագործակցությունը Հայաստանի իշխանությունների հետ **ՀԸԳՀ-ի իրականացման** շուրջ: Այդ նպատակով նա խրախուսում է առկա գործիքների,

ինչպես օրինակ՝ Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիքի՝ Թայեքսի (TAIEX) և Թվինինգի (Twinning), ինչպես նաև համապատասխան երկկողմ և տարածաշրջանային նախաձեռնությունների ռազմավարական կիրառումը: Հայաստանը սերտորեն կհամագործակցի միջազգային ֆինանսական հաստատությունների և ԵՄ-ի հետ՝ ներդրումների համար ԵՄ ապրանքանիշ հանդիսացող «Գլոբալ դարպասներ» նախաձեռնության շրջանակներում ռազմավարական ներդրումային ծրագրեր առանձնացնելու և իրականացնելու համար, այդ թվում՝ Հայաստան-ԵՄ ներդրումների համակարգման հարթակի միջոցով, որտեղ Հայաստանի իշխանությունները, ԵՄ-ն և ՄՖՀ-ները միավորվում են Հայաստանում ներդրումները խթանելու համար՝ նպաստելով կայուն զարգացմանը և տնտեսական աճին:

Հայաստան-ԵՄ գործընկերության սույն ռազմավարական օրակարգը **կլրացնի Արևելյան գործընկերության քաղաքականության շրջանակը**, որը մնում է արժեքավոր գործիք՝ Հայաստան-ԵՄ հարաբերությունների ամրապնդման և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տարածաշրջանային համագործակցության համար: Հայաստան-ԵՄ համագործակցությամբ **կապահովվի գլոբալ քաղաքականության նպատակների իրագործումը**, ներառյալ՝ «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզի համաձայնագիրը և Կայուն զարգացման նպատակների 2030 թվականի օրակարգը, ինչպես նաև դրա Կայուն զարգացման 17 նպատակները: Համագործակցությունը կնպաստի **միջազգային կանոնահեն կարգի** ամրապնդմանը և կօգնի Եվրոպային համաշխարհային հարթակում դառնալ է՛լ ավելի ուժեղ: Այս համատեքստում, առաջնահերթության կարգով պետք է դիտարկվեն բարեփոխումների հետևյալ ուղղությունները.

2.1. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ և արդյունավետ կառավարում

ԵՄ-ն և Հայաստանը հանձնառու են ամրապնդել համագործակցությունը՝ **օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները**

խթանելու համար, ինչպես սահմանված է ՀԸԳՀ-ում: Նրանք կհամագործակցեն Հայաստանի պետական կառավարումը շարունակաբար բարելավելու, արդյունավետ կառավարում ապահովելու և արդարադատության ոլորտը բարեփոխելու ուղղությամբ: Հայաստան-ԵՄ գործընկերության սույն ռազմավարական օրակարգով նախատեսված քաղաքական երկխոսությունը և բարեփոխումների ոլորտում համագործակցությունը նպատակ են հետապնդում ամրապնդել հարգանքը ժողովրդավարական այնպիսի սկզբունքների նկատմամբ, ինչպիսիք են՝ իշխանությունների բաժանումը, քաղաքական բազմակարծությունը, որոշումների կայացման գործընթացում ներգրավվածությունը, համագործակցությունը և ընդդիմության հետ դրական փոխգործակցությունը: ԵՄ-ն և Հայաստանը կհամագործակցեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խթանելու ուղղությամբ, այդ թվում՝ տեղահանված հայերի և փոքրամասնության ներկայացուցիչների համար, ինչպես սահմանված է Հայաստանի կողմից վավերացված ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի հիմնական կոնվենցիաներում և հարակից արձանագրություններում, ինչպես նաև Արդարադատության միջազգային դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներն արդյունավետորեն կատարելու ուղղությամբ: Նրանք նաև կնպաստեն ներպետական քաղաքական բարեփոխումների ամրապնդմանն, այդ թվում՝ աջակցելով Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրին:

2.1.1. Ժողովրդավարությունը

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ապահովել **թափանցիկ, ներառական, ազատ և արդար ընտրություններ** և գործել Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)/ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) առաջարկությունների հիման վրա՝ Հայաստանի Սահմանադրությանը համապատասխան:
- Ապահովել, որ օրենքի գերակայության հիմնական կետերին վերաբերող

օրենսդրական փոփոխությունների շուրջ անցկացվեն համապարփակ և ներառական խորհրդակցություններ, և դրանք համապատասխանեցվեն եվրոպական չափանիշներին ու այնպիսի միջազգային մարմինների կողմից ներկայացված առաջարկություններին, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի **Վենետիկի հանձնաժողովը, Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳՐԵԿՈ) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն**՝ միաժամանակ հաշվի առնելով այլ դերակատարների կողմից ներկայացված առաջարկությունները, ինչպիսինն է Բաց կառավարման գործընկերությունը։

- Ապահովել, որ օրենսդրական և **սահմանադրական բարեփոխումները** լինեն թափանցիկ և ներառական՝ հիմնված ժողովրդավարական սկզբունքների և օրենքի գերակայության վրա, և դրանցում ներգրավված լինեն հիմնական շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ քաղաքացիական հասարակությունը։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ամրապնդել Հայաստանի մարդու իրավունքների համակարգը՝ ներդաշնակեցնելով և ներդնելով մարդու իրավունքների ոլորտում միջազգային և եվրոպական իրավունքը և պրակտիկան։

2.1.2. Արդարադատություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել **արդարադատության ոլորտի** բարեփոխումներն՝ ապահովելով դրա անկախությունը, բարեվարքությունը, հաշվետվողականությունը, որակը և արդյունավետությունը՝ Հայաստանի Սահմանադրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան։
- Համակարգված ձևով իրականացնել **դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրն**՝ անհրաժեշտության դեպքում կատարելով ճշգրտումներ, և ապահովել **Մշտադիտարկման խորհրդի** կողմից պատշաճ

հսկողությունը։

- Արդյունավետորեն կիրարկել վերանայված **Քրեական օրենսգիրքը և Քրեական դատավարության օրենսգիրքն,** այդ թվում՝ համապատասխան շահագրգիռ կողմերի վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցով։
- Ապահովել **Վենետիկի հանձնաժողովի** հետ խորհրդակցությունների անցկացումը և նրա առաջարկությունների իրականացումը։
- Շարունակել ապահովել թափանցիկություն և օբյեկտիվություն, բավարար հիմնավորում, համաչափություն և արժանիքահեն չափանիշների կիրառում, եթե կիրառելի են, **բոլոր դատավորների և դատախազների ընտրության, նշանակման, գնահատման, առաջխաղացման, տեղափոխման** վերաբերյալ որոշումներում, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոններում, ինչպես նաև նրանց վերաբերող **կարգապահական համակարգում**՝ ամրապնդելով կարգավորող և ինստիտուցիոնալ շրջանակը։
- Շարունակել բարելավել **դատական և դատախազական կառավարման մարմինների** անդամների **ընտրության և նշանակման մեթոդներում**, ինչպես նաև այդ մարմինների **որոշումների կայացման գործընթացներում** թափանցիկությունը, մերիտոկրատիան և օբյեկտիվությունը և ներդնել կամ ամրապնդել այդ գործընթացներն ապաքաղաքականացնելու երաշխիքներ։
- Բարձրացնել արդարադատության ոլորտի **արդյունավետությունն**՝ ի թիվս այլնի ընդլայնելով վեճերի արտադատական/այլընտրանքային լուծման մեխանիզմների կիրառումն, այդ թվում՝ հաշտարարության և արբիտրաժի միջոցով, ինչպես նաև Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի (ԱՀՀԿ) ներգրավմամբ՝ ինստիտուցիոնալ գործընկերների աջակցությամբ։
- Ապահովել բոլոր դատավորների և դատախազների **պարտադիր նախնական ուսուցումը**, ինչպես նաև **շարունակական վերապատրաստումը և կարողությունների զարգացումը**, ներառյալ՝ միջազգային դատարանների

դատական պրակտիկայի և նրանց հետ համագործակցության վերաբերյալ մասնագիտացված վերապատրաստումը։

- Բարելավել դատավորների և դատախազների **գործունեության գնահատումն**, այդ թվում՝ հստակ և օբյեկտիվ գնահատման չափանիշների կիրառման և կանոնավոր գնահատումների իրականացման միջոցով։
- Արդարադատության բոլոր հաստատություններին, այդ թվում՝ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին** և հակակոռուպցիոն դատարաններին տրամադրել բավարար ռեսուրսներ՝ իրենց գործառույթներն արդյունավետորեն կատարելու համար։
- Ապահովել արդարադատության ոլորտում հաշվետվողականությունն, այդ թվում՝ **հուսալի կարգապահական համակարգի** միջոցով, նաև դատական և դատախազական կառավարման մարմինների անդամների համար՝ միջազգային չափանիշներին համապատասխան։
- Ապահովել **«Եվրաջաս»-ի հետ համագործակցության մասին»** ԵՄ-ի հետ կնքված միջազգային համաձայնագրի լիարժեք կիրարկումը՝ քրեական գործերով դատական համագործակցությունը բարելավելու և Եվրոպական հանրային դատախազի գրասենյակի (EPPO) հետ Հայաստանի համապատասխան գերատեսչությունների ու իշխանությունների համագործակցությունն ընդլայնելու նպատակով։
- Ինչ վերաբերում է քաղաքացիական գործերով դատական համագործակցությանը՝ միանալ **«Միջազգային մասնավոր իրավունքի մասին» Հաագայի խորհրդաժողովի** համապատասխան կոնվենցիաներին և կիրարկել դրանք։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- **Հզորացնել դատական համագործակցության հարցերը կարգավորող ինստիտուցիոնալ կառույցները**, մասնավորապես՝ կենտրոնական

իշխանությունները, ինչպես նաև միջազգային գործերով զբաղվող դատախազական և դատական մարմինները, և ապահովել համապատասխան ուսուցման և աջակցության տրամադրումը։

- Շարունակել **Արդարադատության ակադեմիայի** կարողությունների ամրապնդումն, ապահովել, որ Ակադեմիայի կարգավիճակը և գործունեությունը համապատասխանեն եվրոպական չափանիշներին, այդ թվում՝ դատական ոլորտում ուսուցման եվրոպական չափանիշներին, և նպաստել համապատասխան եվրոպական դատական ցանցերում Ակադեմիայի ներգրավմանը։
- Պահպանել **հանրության հետ շփումները** և շարունակել խորացնել դրանք՝ նպատակ ունենալով բացատրել, թե դատական և անվտանգության ոլորտների բարեփոխումներն ու այլ կարևոր բարեփոխումներ ինչպես են օգուտ բերում բոլորին, և բարձրացնել համակարգի նկատմամբ հանրության վստահությունը։
- Բարելավել տվյալների հավաքումը և արդարադատության ոլորտի արդյունավետ կառավարումն **էլեկտրոնային արդարադատության** գործիքների կիրառմամբ։
- Բարելավել **արդարադատության ոլորտի բյուջեի** կազմման և կատարման ինստիտուցիոնալ կարողությունները։

2.1.3. Կոռուպցիայի դեմ պայքար, խարդախությունների դեմ պայքար, պետական կառավարման և պետական ծառայության ոլորտի բարեփոխումներ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ապահովել Հայաստանի **2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի** արդյունավետ իրականացումը՝ ԳՐԵԿՈ-ի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակոռուպցիոն ցանցի առաջարկությունների համաձայն։

- Ամրապնդել հակակոռուպցիոն և բարեվարքության հետ կապված հաստատությունների գործառույթներն, այն է՝ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Հակակոռուպցիոն կոմիտե, Առաջին ատյանի** մասնագիտացված **հակակոռուպցիոն դատարան, Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ** և **Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան**:
- Շարունակել կատարելագործել **ազդարարման** գործող մեխանիզմները և ազդարարողների պաշտպանության երաշխիքները:
- Ապահովել **պետական կառավարման և բաց կառավարման ոլորտի բարեփոխումների** շարունակականությունը և արդյունավետ իրականացումը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության/Եվրոպական միության «Աջակցություն ղեկավարման և կառավարման բարելավմանը» (ՍԻԳՄԱ) համատեղ նախաձեռնության հանրային կառավարման սկզբունքների և համապատասխան այլ եվրոպական լավագույն փորձի համաձայն: Սա ներառում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի նախնական գնահատման իրականացումը: Ապահովել «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» օրակարգի/գործողությունների ծրագրի իրականացումը:
- Իրականացնել **քաղծառայողների** կարողությունների բարձրացման հատուկ մշակված **վերապատրաստումներ**՝ կայուն բարեփոխումներ կատարելու և ապացուցահեն ու ներառական քաղաքականություն վարելու վերաբերյալ:
- Ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու նպատակով շարունակել ամրապնդել **քաղաքացիակենտրոն հանրային ծառայությունների** տրամադրումը թե՛ կենտրոնական, թե՛ համայնքային մակարդակներով: Ապահովել հասարակության բոլոր խմբերի համար այդ ծառայությունների հասանելիությունը: Օգտագործել թվային գործիքներ՝ հանրային մասնակցությունը, տեղեկությունների հասանելիությունը և ներգրավվածության հնարավորությունները մեծացնելու համար՝

ապահովելով քաղաքացիական տարածքի սկզբունքների պահպանումը:

- Ընդլայնել Հայաստանի համապատասխան գերատեսչությունների և իշխանությունների համագործակցությունը **Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (OLAF)** հետ:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ներդնել էթիկայի, բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման թեմաներ ներառող **կրթական ծրագրեր** նախադպրոցական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և համալսարաններում և ստեղծել հակակոռուպցիոն կրթության հարթակ, որտեղ դասավանդողները կարող են ներկայացնել իրենց դասավանդման փորձը, դասի հաջողված պլանները և մեթոդները: Հետագայում մշակել պետական ծառայողների և պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, այդ թվում՝ իրավապահ մարմինների, դատախազության և դատական մարմինների համար նախատեսված ուսուցման ծրագրերի հակակոռուպցիոն չափանիշներ և այդ ուսուցումը դարձնել պարտադիր:
- Մշակել կոռուպցիոն հանցագործությունների քննության **ստանդարտ ընթացակարգեր** և բարելավել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մեխանիզմները:
- Հիմք ընդունելով Հայաստանի պետական կառավարման համակարգի՝ ՍԻԳՄԱ-ի կողմից իրականացված նոր նախնական գնահատումը՝ մշակել **երկրի պետական հատվածի բարեփոխումների նոր ռազմավարական փաստաթուղթ** և ապահովել դրա արդյունավետ իրականացումը:

2.1.4. Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել **Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025 թվականների ազգային գործողությունների ծրագրի** իրականացումը և մշակել հաջորդ գործողությունների ծրագիրը՝ ներառելով ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների, մասնավորապես՝ պայմանագրային մարմինների, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, Եվրոպայի խորհրդի, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) և մարդու իրավունքների հարցերով միջազգային կազմակերպությունների առաջարկությունները, եթե անհրաժեշտ է։
- Շարունակել ամրապնդել **Օմբուդսմենի/Մարդու իրավունքների պաշտպանի** դերը և հատկացնել բավարար ռեսուրսներ՝ քաղաքականության մշակմանը և օրենսդրական բարեփոխումների իրականացմանը նրա ակտիվ մասնակցությունն ապահովելու համար, խթանել նորմատիվ իրավական ակտերի մշակումը, ներկայացնել առաջարկություններ՝ առանձին ոլորտներում մարդու իրավունքների հարգանքը, պաշտպանությունը և իրացումն ամրապնդելու համար, խրախուսել մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերի վավերացումը և նպաստել մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը։
- Ապահովել **Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի կանոնադրության** կիրարկումը և շարունակել ՄՔԴ պահանջների համաձայն օրենսդրության ներդաշնակեցման համար անհրաժեշտ քայլերը։ Ապահովել ՄՔԴ-ի հետ աշխատանքի համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների առկայությունը, ինչպես նաև անձնակազմի մասնագիտացված վերապատրաստումը։
- Զարգացնել դատավորների, դատախազների և քննիչների **կարողություններն ու գիտելիքները**՝ ՄՔԴ-ի կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ապահովել **վեճերի կարգավորման և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների** առկայությունը, որոնք պետք է կիրառվեն դատական մեխանիզմներին դիմելուց առաջ կամ որպես դրանց այլընտրանք:
- Շարունակել համագործակցել **մարդու իրավունքները** պաշտպանելու, մասնավորապես՝ դատական համակարգում, իրավապահ մարմիններում և բոլոր պետական կառավարման մարմիններում, այդ թվում՝ Հայաստանի մարզերում, խտրականության բացառումը **խթանելու, դրանց վերաբերյալ իրազեկելու և վերապատրաստելու** ուղղությամբ:
- Շարունակել համագործակցել և բովանդակալից խորհրդակցություններ անցկացնել **քաղաքացիական հասարակության կազմակերպությունների** և ներկայացուցչական սոցիալական գործընկերների (արհմիությունների և գործատուների կազմակերպությունների) հետ՝ որպես շահագրգիռ կողմեր և դիտորդներ այն ոլորտներում, որոնց առաջնահերթություն է տրված ՀԸԳՀ-ում:

2.1.5. Վատ վերաբերմունք և խոշտանգում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Մշտադիտարկել իրավապահ մարմինների և **զինված ուժերի** կողմից վատ վերաբերմունքի և խոշտանգումների ցանկացած դրսևորում և միջոցներ ձեռնարկել դրա դեմ: Ապահովել քննության գործընթացի թափանցիկությունը և այդ գործողությունների համար պատասխանատվությունը:
- Ապահովել քրեական արդարադատության օրենսդրության, մասնավորապես՝ փոփոխված **Քրեական օրենսգրքի և Քրեական դատավարության օրենսգրքի** լիարժեք կիրարկումը՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշների և Եվրոպայի խորհրդի առաջարկությունների համաձայն:
- Շարունակել **քրեակատարողական օրենսդրության բարելավումը**՝ որպես քրեական արդարադատության ոլորտի առավել ընդգրկուն բարեփոխումների մաս, և նպաստել արդյունավետ վերականգնողական արդարադատությանը և նպատակային պատժի սահմանմանը:

- Շարունակել հաշմանդամություն ունեցող և անչափահաս կալանավորների **կալանքի պայմանների բարելավումը** և հաշվի առնել խոցելի իրավիճակներում գտնվող կալանավորների հատուկ կարիքներն՝ առանց որևէ խտրականության։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել քրեակատարողական առողջապահական համակարգի բարելավումը և ապահովել, որ բանտարկյալները հասանելիություն ունենան նույն **առողջապահական ծառայություններին**, ինչ լայն հանրությունը, ներառյալ՝ հոգեկան առողջության ծառայությունները։ Շարունակել փակ հաստատություններում կամ դրանց համար աշխատող բուժաշխատողների վերապատրաստումը՝ վատ վերաբերմունքի մասին հաղորդում ներկայացնելու վերաբերյալ, և շարունակել նրանց տրամադրել դրա համար անհրաժեշտ միջոցներ։
- Շարունակել քրեակատարողական համակարգի, ոստիկանության, բանակի և այլ փակ հաստատությունների **ներքին և արտաքին մշտադիտարկման** արդյունավետության բարելավումը՝ բռնության և վատ վերաբերմունքի վաղ հայտնաբերման և կանխարգելման համար։

2.1.6. Հավասարություն և խտրականության բացառում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել վճռական քայլեր ձեռնարկել **բոլորի համար հավասարություն ապահովելու և ցանկացած հիմքով խտրականության դեմ պայքարելու** համար նաև այն դեպքերում, երբ դա ուղղված է կանանց և աղջիկների, ազգային, կրոնական և այլ փոքրամասնություններին պատկանող անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդ կամ տարեցների և ԼԳԲՏԻ

անձանց դեմ՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական կյանքում: Ընդ որում, սկզբունքորեն կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել խտրականության բազմակի և հատվող ձևերին:

- Ամրապնդել և ապահովել **«Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի** կիրարկումը և **իրավահավասարության ապահովման** անկախ **ազգային մարմնի** ստեղծումն՝ անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներով:
- Ձեռնարկել լրացուցիչ միջոցներ՝ ապահովելու համար, որ **ատելության շարժառիթով կատարված հանցագործություններն**, այդ թվում՝ ԼԳԲՏԻ անձանց դեմ, **կանխվեն, քննվեն և պատժվեն** բոլոր համապատասխան միջոցներով, ներառյալ՝ կողմնակալ շարժառիթները որպես ծանրացուցիչ հանգամանքներ ճանաչելը և համապատասխան իրավական շրջանակի առկայությունն ապահովելը:
- Շարունակել իրավական շրջանակի վերանայումը՝ **ընտանեկան և գենդերային բռնության, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման** դեմ պայքարին ուղղված օրենսդրության կիրարկումն ամրապնդելու, իրազեկվածության բարձրացմանը նպաստելու համար, ինչպես նաև ապահովել, որ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերը և ընտանեկան ու գենդերային բռնություն վերապրածները հասանելիություն ունենան արդարադատությանն, արդյունավետ պաշտպանության միջոցներին, առողջապահական ծառայություններին և վնասների փոխհատուցմանը:
- Ստեղծել մարդկանց դեպի **մասնագիտացված ծառայություններ** ուղղորդելու մեխանիզմ՝ միաժամանակ ապահովելով ընտանեկան և գենդերային բռնություն վերապրածների գաղտնիության պաշտպանությունը և դատարանի պաշտպանական որոշումների ժամանակին կայացումը:
- Նպաստել ընտանեկան և գենդերային բռնություն վերապրածների համար **աջակցության կենտրոնների ծառայությունների** հետագա բարելավմանը և դիվերսիֆիկացմանը:

- Ապահովել ընտանեկան և գենդերային բռնություն վերապրածների **տնտեսական հզորացմանը** նպաստող ծրագրերի իրականացումը։
- Ամրապնդել նաև գենդերային հավասարության իրավական և քաղաքական շրջանակն՝ արդյունավետորեն իրականացնելով **Հայաստանի գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունը**, որի շրջանակներում Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհուրդը կստանձնի գենդերային հավասարության քաղաքականության մշտադիտակման և իրականացման ազգային մարմնի դերը։ Ուսումնասիրել Հայաստանի ոլորտային նախարարություններում գենդերային հարցերով համակարգման կենտրոնների ստեղծման հնարավորությունը՝ որպես լավ գործելակերպ։
- Նպաստել **գենդերային հավասարության առաջխաղացման ազգային մեխանիզմի** հետագա կատարելագործմանն՝ ապահովելով հանրային կյանքի բոլոր ոլորտներում բոլորի համար հավասար իրավունքներ և հնարավորություններ։
- «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (**Ստամբուլի կոնվենցիա**) ստորագրումից հետո գործել Վենետիկի հանձնաժողովի կարծիքին համապատասխան։
- Շարունակել աշխատանքը **հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության**, այդ թվում՝ ցավի արդյունավետ բուժման և պալիատիվ խնամքի խոչընդոտների վերացման ուղղությամբ, և վճռական քայլեր ձեռնարկել ապաինստիտուցիոնալացման ուղղությամբ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն։
- Արդյունավետորեն իրականացնել Հաշմանդամություն ունեցող անձանց **սոցիալական ներառման** 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումները։

- Ապահովել **«Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի** ընդունումը և իրականացումը՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի կարծիքը։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ձեռնարկել ակտիվ քայլեր քաղաքական որոշումների կայացման հարթակներում, աշխատաշուկայում և տնտեսական գործունեության մեջ, այդ թվում՝ տեղական ներկայացվածության մակարդակով (այսինքն՝ համայնքներ) և իրավապահ մարմիններում **կանանց լիարժեք, հավասար և կառուցողական մասնակցությունն ու ներկայացվածությունը**, ինչպես նաև փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունն ու ներկայացվածությունը խթանելու ուղղությամբ։
- Ձեռնարկել քայլեր կլիմայի փոփոխության նկատմամբ **գենդերազգայուն մոտեցումներ** մշակելու ուղղությամբ՝ ապահովելով ներառական սկզբունքները և իրազեկվածության բարձրացումը։
- Ձեռնարկել հետագա միջոցառումներ՝ **աշխատանքի և անձնական կյանքի միջև հավասարակշռություն** ապահովելու համար և ձեռնարկել **սոցիալական պաշտպանության համակարգը** բարեփոխելուն ուղղված հետագա քայլեր՝ աշխատաշուկայում կանանց մասնակցության ծավալն ու տեսակը բարելավելու նպատակով, այդ թվում՝ լրացուցիչ ծրագրեր՝ խնամատարներին, միայնակ մայրերին և խոցելի իրավիճակում գտնվող ցանկացած անձի աջակցելու համար։
- Ձեռնարկել ակտիվ քայլեր՝ ծնողների միջև երեխաների խնամքի հարցում **պարտականությունների հավասար բաշխումը** խթանելու համար՝ զարգացնելով ծնողավարման հմտություններն ու կարողությունները։
- Շարունակել աշխատանքները **գենդերային հավասարության համաթիվը** բարելավելու, վարձատրության գենդերային խզվածքը փոքրացնելու և կրթության ու գիտության ոլորտում խտրականությունը հաղթահարելու ուղղությամբ։

- Նպաստել **ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց** սոցիալական և տնտեսական **ներառման ու մասնակցության** ավելի բարձր մակարդակ ապահովելուն, այդ թվում՝ տեղեկությունների և կրթության հասանելիության միջոցով։
- Ընդլայնել **հաշմանդամություն ունեցող անձանց** տրամադրվող համայնքային ծառայությունների մատուցման շրջանակը։
- Մատուցել **ինքնուրույն կյանք վարելուն** նպաստող ծառայություններ՝ ապաինստիտուցիոնալացման նպատակով։
- Ձեռնարկել ակտիվ քայլեր **գենդերազգայուն բյուջեների** կազմման և կատարման ուղղությամբ՝ գենդերազգայուն մոտեցումների հիման վրա **տվյալների տարանջատում** իրականացնելով։

2.1.7. Երեխայի իրավունքներ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ամրապնդել երեխայի իրավունքներն, այդ թվում՝ **Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի** շրջանակներում, և վերջնականացնել **«Սոցիալական աջակցության մասին» օրենքի, «Երեխայի իրավունքների մասին» օրենքի և Ընտանեկան օրենսգրքի** համապարփակ վերանայման և կիրարկման գործընթացը։
- Կիրարկել **«Երեխայի իրավունքների մասին»** վերանայված **օրենքը** և **Ընտանեկան օրենսգիրքը**՝ երեխաների իրավունքների պաշտպանության համալիր ծրագրին համապատասխան։
- Արագացնել **«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի** կիրարկումը։
- Ձեռնարկել հետագա քայլեր՝ ուղղված **տեղահանված երեխաների** համար բնակարան, սնունդ, կրթության և առողջապահության հասանելիություն

ապահովելուն, և ավելի մեծ ուշադրություն դարձնել հակամարտությունից տուժած երեխաների հոգեկան առողջությանը:

- Ընդլայնել **խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների** (հաշմանդամություն ունեցող երեխաներ, բռնության, ծաղրուծանակի ենթարկված երեխաներ) համար նախատեսված համայնքային ծրագրերը:
- Կանխել **հաստատություններում երեխաների** շահագործումը, բռնությունը և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը կամ պատիժը, գրանցել բռնության կասկածելի և հաստատված դեպքերը և իրականացնել ենթադրյալ բռնության բոլոր դեպքերի լիարժեք քննություն՝ հանցագործություն կատարած անձանց բացահայտելու և պատժելու համար:
- Շարունակել բարելավել **ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների կրթական հնարավորությունները** և միջոցներ ձեռնարկել **երեխաների վաղ կամ հարկադիր ամուսնությունները կանխելու համար**:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ձեռնարկել քայլեր **երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի** շրջանակներում սոցիալական և վարքագծային փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ: Բարձրացնել երեխաների հետ աշխատանքներ տանող անձանց իրազեկվածությունը՝ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ, ինչպես նաև զարգացնել նրանց գիտելիքները՝ դրա կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ: Բարձրացնել հանրության իրազեկվածությունը և կրթել հանրությանը՝ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասով:
- Զարգացնել **սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետների** կարողությունները:

- Շարունակել աշխատանքները երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող և աղքատության մեջ գտնվող երեխաների **ապաինստիտուցիոնալացման** ուղղությամբ, այդ թվում՝ ներդնելով այլընտրանքային խնամքի հասցեական ծառայություններ և սոցիալական աջակցության համապատասխան միջոցառումներ։

2.1.8. Հիմնական աշխատանքային չափանիշներ և արհմիությունների իրավունքներ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ձեռնարկել աշխատանքի **տեսչական ստուգման** համակարգը զարգացնելուն ուղղված հետագա քայլեր՝ ապահովելով միջազգային չափանիշներին դրա համապատասխանությունն, աշխատանքի տեսուչների կարողություններն ամրապնդելու, ինչպես նաև աշխատանքի տեսուչների կարևորության և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի դերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ։ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին տրամադրել բավարար լիազորություններ և ռեսուրսներ՝ աշխատանքի շահագործման և թրաֆիքինգի դեպքերը կանխելու և բացահայտելու նպատակով տեսչական ստուգումներ և իրազեկման աշխատանքներ իրականացնելու համար։
- Շարունակել **Աշխատանքային օրենսգրքում** փոփոխությունների կատարումը՝ միջազգային չափանիշներին (օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության հիմնարար կոնվենցիաներին, ինչպես նաև Սոցիալական արդարության գլոբալ կոալիցիայի սկզբունքներին) համապատասխան։
- Շարունակել աշխատանքն այնպիսի մեխանիզմի մշակման ուղղությամբ, որի միջոցով սահմանվում և արգելվում է աշխատավայրում ցանկացած տեսակի **ոտնձգություն** (ներառյալ՝ սեռական ոտնձգությունը)։
- Ձեռնարկել հետագա քայլեր **միավորման ազատությանը և կոլեկտիվ**

պայմանագրեր կնքելու իրավունքի մասով արհմիությունների և գործատուների միությունների վերաբերյալ գործող օրենքները վերանայելու ուղղությամբ՝ խորհրդակցելով սոցիալական գործընկերների հետ և հաշվի առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության վերահսկող մարմինների դիտողությունները:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- **Վերացնել ֆորմալ սահմանափակումները** (ներառելով, սակայն չսահմանափակվելով Միասնական սոցիալական ծառայության շրջանակներում սահմանվածներով)՝ ապահովելու համար, որ սոցիալական ծառայությունների մատուցման բոլոր հարթակներն, այդ թվում՝ աշխատանք փնտրելու հարթակները լիովին հասանելի լինեն **հաշմանդամություն ունեցող անձանց համար**:

2.1.9. Սոցիալական քաղաքականություն և տեղահանված հայերի սոցիալ-տնտեսական ներառում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Տրամադրել անհրաժեշտ գործիքներ և ապահովել **փախստականների ու տեղահանված հայերի իրավունքների պաշտպանությունը, սոցիալ-տնտեսական ներառումը**, ինչպես նաև կենսական ծառայություններին նրանց հասանելիությունը:
- Ապահովել **ժողովրդագրական և զբաղվածության ապահովման** նպատակային **ռազմավարությունների** ընդունումը և իրականացումը՝ հաշվի առնելով կոնկրետ խոցելի գործոնները (գենդեր, տարիք, հաշմանդամություն):
- Ապահովել փախստականների և տեղահանված հայերի համար **ազգային առողջապահական և կրթական համակարգերի** հասանելիությունը և վերացնել իրավական և վարչական խոչընդոտները:

- Ապահովել Հայաստանի Հանրապետության **միգրացիոն քաղաքականության** ռազմավարության և գործողությունների ծրագրի, Ինտեգրման և վերաինտեգրման հարցերի վերաբերյալ կանոնակարգի ընդունումը և կիրարկումը:
- Ապահովել **բնակապահովման ծրագրերի** իրականացումը, ինչպիսիք են սոցիալական բնակարանային ապահովումը և վարձավճարների փոխհատուցումը՝ փախստական ամենախոցելի ընտանիքների համար:
- Ապահովել հավաստագրված սոցիալական աշխատողների միջոցով **բարձրորակ սոցիալական ծառայությունների** հասանելիությունը սոցիալական գործերի հաշվառման մշակված համակարգի կիրառմամբ՝ ներառելով նոր սոցիալական ծառայություններ, ինչպես օրինակ՝ սոցիալական պատրոնաժը խոցելի և անապահով փախստական ընտանիքների համար:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ամրապնդել **սոցիալական ծառայությունների տրամադրման մեխանիզմները**՝ միաժամանակ բարելավելով ցնցումներին արձագանքելու կարողությունները:
- Իրականացնել **փախստականների հզորացման** համալիր ծրագրեր՝ կենտրոնանալով նրանց սոցիալ-տնտեսական ներառման և Հայաստանի աշխատաշուկա մուտք գործելու հնարավորության ապահովման վրա, այդ թվում՝ վերապատրաստման, ուսուցման, մասնագետներին աշխատանքի տեղավորման, կենսապահովման ծրագրերի և քաղաքացիական կողմնորոշման ծրագրերի, լեզվի դասընթացների, երկարաժամկետ և կայուն բնակապահովման լուծումներին հասանելիություն և հանրային ծառայություններին հասանելիություն ապահովելու միջոցով:

2.2. Ազատություն, շարժունակություն և անվտանգություն

Արդարադատության և ներքին գործերի ոլորտում ԵՄ-ի և Հայաստանի միջև

ընդլայնված համագործակցությունը կարգավորվում է մի շարք աշխատանքային պայմանավորվածություններով և համագործակցության համաձայնագրերով, այդ թվում՝ Ֆրոնտեքսի՝ Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության (2012 թվականից, սպասվում է վերանայում), Եվրոպական միգրացիոն ցանցի (ԵՄՑ, 2021թ.), Եվրապոլի (2021թ.), Իրավապահ մարմինների վերապատրաստման Եվրոպական միության գործակալության (ՈԵՔ [CEPOL], 2017թ.) և Եվրաջասթի (2024թ.) հետ կնքված համաձայնագրերով:

2024 թվականի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած **վիզաների ազատականացման շուրջ երկխոսության** մեկնարկը կարևոր քայլ է ազատության, շարժունակության և անվտանգության ոլորտում ԵՄ-ի և Հայաստանի միջև համագործակցության ամրապնդման գործում: ԵՄ-ի և Հայաստանի միջև գործընկերության սույն ռազմավարական օրակարգը կնպաստի երկխոսության և դրա ուղենիշերի լավ և արդյունավետ իրականացմանը: Սույն փաստաթղթի շարադրանքը չի հակասում վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի ուղենիշերի վերջնական ձևակերպմանը: ԵՄ-ն կշարունակի աջակցել շարժունակության, անվտանգության ոլորտում Հայաստանի համապատասխան մարմինների, այդ թվում՝ Ներքին գործերի նախարարության և դրա ենթակա մարմինների **ինստիտուցիոնալ շրջանակի և կարողությունների ամրապնդմանն** ուղղված Հայաստանի ջանքերին: Հայաստանը հետագայում ևս կշարունակի նախաձեռնությունները՝ ուղղված Նախարարության նկատմամբ **հանրային ընկալման բարելավմանը**՝ կատարելագործելով վերջինիս կողմից մատուցվող հանրային ծառայությունների որակը և խորացնելով հանրային հաղորդակցությունը:

2.2.1. Անձնական տվյալների պաշտպանություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ձեռնարկել միջոցներ՝ տվյալների պաշտպանության վերաբերյալ

օրենսդրական շրջանակի հետագա կատարելագործման նպատակով, այդ թվում՝ իրավապահ ոլորտում, և **ամրապնդել** Հայաստանի անձնական տվյալների պաշտպանության գործակալության **անկախությունը** և տվյալների պաշտպանության հետ կապված հարցերը վերահսկելու **և** լուծելու **դրա կարողությունները**:

- Շարունակել ապահովել անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ և ընդունել ԵՄ և Եվրոպայի խորհրդի չափանիշներին համապատասխան օրենսդրություն: Երաշխավորել **անձնական տվյալների պաշտպանության իրավունքը** հարգելու սկզբունքն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ամրապնդել **Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կարողությունները** և ապահովել անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ:

2.2.2. Միգրացիա, ապաստանի տրամադրում և սահմանների համալիր կառավարում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել արդյունավետորեն իրականացնել **Հայաստանի և ԵՄ-ի միջև վիզաների դյուրացման մասին համաձայնագիրը** և **Հայաստանի և ԵՄ-ի միջև հետընդունման մասին համաձայնագիրը**, ինչպես նկարագրվում է այդ համաձայնագրերի հիման վրա ստեղծված համապատասխան համատեղ կոմիտեներում : Համաձայնագրերի արդյունավետ իրականացումը կշարունակի լինել **վիզաների ազատականացման շուրջ երկխոսության** առաջընթացի հիմնարար գործոն:
- Շարունակել ամրապնդել Հայաստանի **միգրացիայի կառավարման համակարգը**, որը գործարկվում է Ներքին գործերի նախարարության

միգրացիայի և քաղաքացիության ծառայության և միգրացիայի հարցերով զբաղվող այլ մարմինների կողմից: Ապահովել ապացույցների վրա հիմնված միգրացիայի և փախստականների պաշտպանության քաղաքականություն, և որ գործող համակարգերն ու գործելակերպը համապատասխանեն միջազգային և ԵՄ չափանիշներին: Երկու կողմերը կհամագործակցեն միգրացիայի կառավարման ոլորտում նորարարական թվային լուծումների ընդունման ուղղությամբ:

- Համագործակցել համապատասխան իրավական շրջանակի վերանայման և դրա գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման վերաբերյալ **միգրացիայի կառավարման ազգային ռազմավարության** ընդունման ուղղությամբ:
- Ամրապնդել գործառնական համագործակցությունը՝ ԵՄ անդամ պետություններում ՀՀ քաղաքացիների կողմից **ապաստանի տրամադրման վերաբերյալ ներկայացվող անհիմն դիմումների թիվը զգալիորեն նվազեցնելու համար**:
- Շարունակել ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ուղղված Հայաստանից դեպի ԵՄ անդամ պետություններ **անօրինական միգրացիայի արմատական պատճառների վերացմանն**, այդ թվում՝ գործադրել ջանքեր որոշ ՀՀ քաղաքացիների կողմից իրենց վիզաների կամ ապաստանի տրամադրման վերաբերյալ դիմումների՝ բուժման նպատակով չարաշահումը կանխելու համար՝ ամրապնդելով Հայաստանի հանրային առողջապահության ոլորտը և բարձրացնելով հանրության իրազեկվածությունն այս զարգացումների վերաբերյալ:
- Շարունակել ամրապնդել **ապաստանի տրամադրման համակարգը**՝ լիովին համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին և ապահովելով մարդու իրավունքների պաշտպանության ամենաբարձր մակարդակը՝ սկսած *հարկադիր արտաքսման արգելքից* և ընդունելության համարժեք չափանիշներից:
- Ամրապնդել համագործակցությունն ու երկխոսությունը միգրացիայի տարբեր

ոլորտներում ԵՄ-ի և Հայաստանի միջև **շարժունակության շուրջ գործընկերության** համատեքստում:

- Շարունակել զարգացնել գործառնական համագործակցությունը **Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական գործակալության (Ֆրոնտեքս)** հետ, այդ թվում՝ Հայաստանի սահմանային կառավարման մարմինների հետ բանակցությունների և նոր աշխատանքային համաձայնագրի ստորագրման միջոցով: Նոր աշխատանքային համաձայնագրով կարող է նախատեսվել ավելի լայն գործառնական համագործակցություն, լավագույն գործելակերպի և դիտորդների փոխանակում, վերապատրաստում և տեղեկությունների փոխանակում, այդ թվում՝ «ԵՎՐԱՍՈՒՐ» համակարգի շրջանակներում:
- Մշակել և ներդնել **Սահմանների համալիր կառավարման (ՍՀԿ)** համակարգ ազգային մակարդակով, այդ թվում՝ կարողությունների հզորացման միջոցով, ներառյալ՝ սահմանների կառավարման հետ կապված ռիսկերի վերլուծությունը:
- Շարունակել **Եվրոպական միգրացիոն ցանցին (ԵՄՑ)** դիտորդ երկրի կարգավիճակով ակտիվ մասնակցությունը և ցանցում արդյունավետ կերպով փոխանակել տեղեկություններ ԵՄ անդամ պետությունների և Հայաստանի միջև՝ միգրացիայի և ապաստանի տրամադրման վերաբերյալ: Հետագայում ԵՄՑ-ն կշարունակի աջակցել միգրացիոն տվյալների հավաքագրման ստանդարտացմանը և համագործակցել Հայաստանի հետ միգրացիայի վերաբերյալ վիճակագրական տվյալների հետագա փոխանակման և վերլուծության ուղղությամբ:
- Հաշվետվություն ներկայացնել **միգրացիոն տվյալների վերլուծության** և ռիսկերի գնահատման բարելավման վերաբերյալ:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Մշակել **շրջանառու և օրինական միգրացիա** առաջարկելու ավելի

արդյունավետ եղանակներ՝ միաժամանակ հարգելով գործող ազգային օրենսդրությունն ու իրավասությունները և լիովին հարգելով բոլոր միգրանտ աշխատողների մարդու իրավունքները:

- Ապահովել Հայաստանի՝ **միգրացիայի և զանգվածային ներհոսքի** համապարփակ **ռազմավարությունների** իրականացումը:
- Իրականացնել **կենսաչափական անձնագրերի** աստիճանական ներդրումը՝ լիովին համապատասխանեցնելով ԻԿԱՕ-ի ամենաբարձր չափանիշներին և առաջարկվող գործելակերպերին, այդ թվում՝ արտերկրում գտնվող հայկական հյուպատոսություններում:

2.2.3. Իրավապահ մարմիններ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել **ոստիկանության համակարգի բարեփոխումների** օրակարգի իրականացումն՝ ամրապնդելով ոստիկանության բարեվարքությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունն, արդյունավետությունը և գործունակությունն, այդ թվում՝ Հայաստանի կրթական ծրագրի միջոցով:

2.2.4. Կազմակերպված հանցավորության դեմ պայքար

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Առավելագույնս օգտագործել և արդյունավետորեն իրականացնել **Եվրապոլի** հետ կնքված աշխատանքային համաձայնագիրը՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ընդլայնման նպատակով:

- Ընդլայնել համագործակցությունը Հայաստանի իշխանությունների, այդ թվում՝ Ներքին գործերի նախարարության և իրավապահ մարմինների վերապատրաստման ԵՄ գործակալության (ՈԵՔ [CEPOL]) միջև:

- Բարձրացնել Հայաստանի ակտիվ մասնակցությունն Արևելյան գործընկերության երկրներում՝ կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության նվազեցմանն ուղղված **ԵՄ բոլոր տարածաշրջանային նախաձեռնություններում**:
- Շարունակել ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ուղղված «**Մարդկանց**, հատկապես կանանց և երեխաների **թրաֆիքինգի** կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությանը, «Ցամաքով, ծովով և օդով **միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխման** դեմ» արձանագրությանը, ինչպես նաև ԵՄ և Եվրոպայի խորհրդի չափանիշներին Հայաստանի իրավական շրջանակի հետագա համապատասխանեցմանը: Հաշվի առնել Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) առաջարկությունները, մասնավորապես՝ թրաֆիքինգով զբաղվող անձանց քրեական հետապնդման ենթարկելու և զոհերի պաշտպանության ու արդարադատության մատչելիության վերաբերյալ:
- Մշտադիտարկում իրականացնել և հաշվետվություն ներկայացնել մարդկանց թրաֆիքինգի դեպքերի **պրոակտիվ հայտնաբերման և քննության** արդյունավետության վերաբերյալ՝ ուշադրություն դարձնելով բնակչության այն խմբերի վրա, որոնք խոցելի են կամ գտնվում են թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի տակ:
- Շարունակել արդյունավետ կերպով կանխել **կիբեռհանցագործությունները** և հակազդել դրանց, ինչպես նաև ընդունել այս ոլորտում հատուկ ռազմավարություն կամ գործողությունների ծրագիր, այդ թվում՝ ԵՄ-ի և Եվրոպայի խորհրդի հետ միջազգային համագործակցության ակտիվացման միջոցով:
- Քայլ առ քայլ իրականացնել **«Սեռական շահագործումից և սեռական ոտնձգությունից երեխաների պաշտպանության մասին»** Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Համագործակցել «Հանցավոր սպառնալիքների հակազդման եվրոպական բազմապրոֆիլ հարթակի» **(EMPACT)** համատեքստում:
- Ակտիվացնել կիբեռհանցագործության դեմ պայքարի ոլորտում գործադրվող ջանքերը՝ ուղղված **Բուդապեշտի կոնվենցիային** համապատասխան համապարփակ իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորմանը:

2.2.5. Արգելված թմրամիջոցների դեմ պայքար

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Իրականացնել **թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին** ուղղված հավասարակշռված քաղաքականություն, այդ թվում՝ միջգերատեսչական և միջազգային համագործակցության ակտիվացման միջոցով:
- Շարունակել թմրամիջոցների կանխարգելման ուղղությամբ համագործակցությունը՝ լիովին համապատասխանեցնելով թմրամիջոցների հետ կապված Հայաստանի քաղաքականությունը ԵՄ դիրքորոշումներին, և շարունակել իրականացնել **թմրամիջոցների դեմ պայքարի ռազմավարությունը** և իրավասու ինստիտուցիոնալ կառույցների գործունեությունը:
- Պահպանել **սերտ համագործակցություն** Եվրոպական միության դեղորայքի գործակալության **(ԵՄԴԳ)** (նախկինում՝ Թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի եվրոպական կենտրոնի (ԹԹՄԵԿ)) հետ՝ համապատասխան և վավեր տեղեկությունների փոխանակման նպատակով:
- Շարունակել **զարգացնել** Հայաստանի իրավապահ մարմինների **կարողությունները** թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության առցանց

ցանցերի դեմ պայքարում:

- Շարունակել բարելավել **համակարգումն ու փոխադարձ իրավական օգնությունը** թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործերի քննության գործընթացում:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ապահովել թմրամիջոցների հետ կապված հարցերի նկատմամբ **հավասարակշռված և ինտեգրված մոտեցում՝** հնարավորություն տալով, որ համակարգերը հաղթահարեն թմրամիջոցների օգտագործման առողջական և սոցիալական հետևանքներն, ապահովել թմրամիջոցների օգտագործման ավելի արդյունավետ կանխարգելում և նվազեցնել արգելված թմրամիջոցների մատակարարումն, ապօրինի շրջանառությունը և դրանց պահանջարկը:

2.2.6. Փողերի լվացման դեմ պայքար և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ամրապնդել **ֆինանսական հետաքննություններ**, այդ թվում՝ կազմակերպված հանցավորության գործերի մասով՝ համակարգված հիմունքներով զուգահեռ ֆինանսական հետաքննություններ արդյունավետորեն անցկացնելու Հայաստանի կարողությունները և հասնել կոնկրետ արդյունքների, որոնք կհանգեցնեն քրեական հետապնդման, դատապարտման և հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների, այդ թվում՝ վիրտուալ ակտիվների բռնագրավման՝ կազմակերպված հանցավորության ցանցերի և փողերի լվացման դեմ պայքարի նպատակով:
- Շարունակել համագործակցությունը **Եվրոպայի խորհրդի, ՄՈՆԻՎԱԼ-ի և ԵՄ անդամ պետությունների համապատասխան մարմինների** հետ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերում:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման և դրանց դեմ պայքարի **իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի** հետագա զարգացումն, այդ թվում՝ հնարավորության և նպատակահարմարության դեպքում, այս ոլորտներում ԵՄ օրենսդրությանը մոտարկման միջոցով:
- Շարունակել ամրապնդել **բռնագրավման, ակտիվների վերականգնման և ակտիվների կառավարման** ոլորտում գործառնական համագործակցությունը՝ Հայաստանի իշխանությունների և Ակտիվների վերականգնման ԵՄ գրասենյակների միջև արդյունավետ հաղորդակցության և լավագույն գործելակերպի փոխանակման միջոցով:

2.3. Արտաքին և անվտանգության քաղաքականություն

Կշարունակեն ամրապնդվել ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (**ԸԱՔՔ**), այդ թվում՝ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (**ԸԱՊՔ**) շուրջ **քաղաքական երկխոսությունն ու համագործակցությունը**: Այս համագործակցությունը կներառի տարածաշրջանային անվտանգությունն, անվտանգության ոլորտի բարեփոխումները, ճգնաժամերի կառավարումն, ահաբեկչության դեմ պայքարը, կիբեռանվտանգությունը և հիբրիդային սպառնալիքները, ներառյալ՝ արտաքին տեղեկատվության մանիպուլյացիայի և միջամտության դեմ պայքարը՝ միաժամանակ ապահովելով համապատասխանությունը «Կանայք, խաղաղություն ու անվտանգություն» օրակարգով ստանձնված հանձնառություններին:

Համագործակցությունը հիմնված կլինի **ընդհանուր արժեքների** վրա, ներառյալ՝ ՄԱԿ-ի կանոնադրության և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի նպատակներին ու սկզբունքներին հավատարմությունը: Դրա նպատակը կլինի

բարձրացնել քաղաքականության համաձայնեցվածությունն ու արդյունավետությունը՝ օգտագործելով երկկողմ, բազմակողմ և տարածաշրջանային ֆորումները և պահպանելով միջազգային իրավունքի հիման վրա գործող կանոնահեն միջազգային կարգը։

2.3.1. Տարածաշրջանում հարաբերությունների կարգավորում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել **ԵՄ ջանքերը**՝ նպատակ ունենալով **պահպանել** Հայաստանի և Ադրբեջանի միջև **երկարատև և արժանապատիվ խաղաղություն**՝ հիմնված ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության փոխադարձ ճանաչման սկզբունքների վրա՝ համաձայն 1991 թվականի Ալմաթիի հռչակագրի։
- Աջակցել **Արդարադատության միջազգային դատարանի** բոլոր համապատասխան **որոշումների** լիարժեք, անհապաղ և արդյունավետ կատարմանը։
- Շարունակել հանդես գալ ի պաշտպանություն հայ **բանտարկյալների և այլ կալանավորված անձանց** ազատ արձակման և ջանքեր գործադրել կարգավորելու չլուծված **մարդասիրական խնդիրներն**, այդ թվում՝ անհետ կորած անձանց ճակատագիրը և բռնի անհետացումները՝ որպես **վստահության ամրապնդման միջոցներ**։
- Շարունակել աջակցել **Հայաստանի և Թուրքիայի** միջև **հարաբերությունների** լիակատար **կարգավորմանը** և խրախուսել երկու պետությունների միջև սահմանի ամբողջական բացման ուղղությամբ արդեն ձեռք բերված համաձայնությունների իրականացումն, այդ թվում՝ կանոնավոր քաղաքական երկխոսության և համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցով։
- Աջակցել տարածաշրջանում ներառական **տարածաշրջանային**

տրանսպորտային կապի զարգացմանը երկրների ինքնիշխանության և ազգային իրավազորության շրջանակում, ինչպես նաև հավասարության և փոխադարձության սկզբունքներին համապատասխան, որը նաև ընկած է Հայաստանի **«Խաղաղության խաչմերուկ» նախագծի** հիմքում:

- Աշխատանքներ տանել գենդերային հարցերը հիմնական ուղղություն դարձնելու և հակամարտությունների կարգավորման ու խաղաղության կառուցման, ինչպես նաև հաշտեցման և վերականգնման բոլոր միջոցառումներում **կանանց**, այդ թվում՝ հակամարտությունից տուժած կանանց և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների **լիարժեք, հավասար, արդյունավետ և կառուցողական մասնակցության** ապահովման ուղղությամբ:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Աշխատանքներ տանել Հայաստանի և Ադրբեջանի միջև **վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների** մշակման ուղղությամբ՝ ի նպաստ նրանց հասարակությունների միջև կայուն և երկարատև խաղաղության ու հաշտեցման:
- Նպաստել **«խաղաղության դիվիդենտների»** ապահովմանը Հայաստանում տարածաշրջանային կապի ներդրումային նախագծերի միջոցով, այդ թվում՝ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության հիմքում ընկած Հայաստանի նոր տարածաշրջանային քաղաքականության մոտեցման հավակնությունների հետ մեկտեղ՝ ԵՄ «Գլոբալ դարպասներ» ռազմավարությանը համապատասխան:

2.3.2. Միջազգային և տարածաշրջանային համագործակցություն և ՀԱՊՔ համագործակցություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել խորացնել **քաղաքականության և անվտանգության շուրջ**

երկխոսությունը և անցկացնել **անվտանգության և պաշտպանության վերաբերյալ** կանոնավոր **խորհրդակցություններ**:

- Ուսումնասիրել **անվտանգության և պաշտպանության ոլորտում համագործակցության** հետագա ամրապնդման ուղիները, որոնք կարող են հանգեցնել առավել կանոնակարգված համագործակցության:
- Ապահովել **Հայաստանում ԵՄ առաքելության (ՀԵՄԱ)** լիարժեք գործառնական հնարավորությունները՝ նպատակ ունենալով դիտարկել Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով անվտանգության իրավիճակը, և հաշվետվություն ներկայացնել դրա վերաբերյալ, նպաստել Հայաստանի՝ հակամարտությունից տուժած տարածքներում մարդկանց անվտանգության ապահովմանը և ձևավորել վստահություն՝ ի նպաստ տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանմանը: Աշխատանքներ տանել ՀԵՄԱ-ի ներկայությունը հնարավորինս երկարաժամկետ պահպանելու ուղղությամբ:
- Համագործակցել **Հայաստանի անվտանգության ոլորտի բարեփոխումներին** աջակցության նպատակով՝ նրա ազգային անվտանգությունը, կայունությունն ու դիմակայունությունը բարձրացնելու համար: Համատեղ աշխատանքներ տանել անվտանգության միջավայրի բարելավման ուղղությամբ՝ նպաստելով քաղաքացիական անձանց կողմից վերահսկվող և մարդու իրավունքներին ու օրենքի գերակայությանը համապատասխան գործող անվտանգության հաստատությունների արդյունավետության ու հաշվետվողականության բարձրացմանը: Նպատակ ունենալ բարձրացնելու տարբեր դերակատարների միջև համագործակցությունը և ամրապնդել վերահսկողության մեխանիզմներում քաղաքացիական հասարակության դերը:
- Նպատակ ունենալ շարունակելու և ընդլայնելու Հայաստանին **Եվրոպական խաղաղության գործիքի** շրջանակներում ցուցաբերվող աջակցությունը՝ որպես առաջնահերթություն: Շարունակել համագործակցությունը՝ Հայաստանի դիմակայունությունը բարձրացնելու նպատակով:
- Խորացնել համագործակցությունը **հիբրիդային սպառնալիքների** դեմ

պայքարում, ներառյալ՝ **արտաքին տեղեկատվության մանիպուլյացիայի և միջամտության (ԱՏՄՄ)** դեմ պայքարը, քննարկել կարողությունների զարգացման և հիբրիդային սպառնալիքներին արդյունավետ հակազդման համապարփակ շրջանակի մշակման հարցում Հայաստանին աջակցություն տրամադրելու հարցը, ներառյալ՝ ազգային անվտանգության և հիբրիդային սպառնալիքների նկատմամբ դիմակայունության հետ կապված հատուկ ինստիտուտների ստեղծմանը և ամրապնդմանն աջակցելու հնարավորության քննարկումը։

- Նպաստել Հայաստանի **կիբեռդիմակայունության** բարձրացմանը։ Դիտարկել կարողությունների զարգացումը, համապատասխան տեխնիկական աջակցությունը, համապատասխան քաղաքականության շրջանակների, ինչպես նաև բազմակողմ ֆորումներում, այդ թվում՝ ԵԱՀԿ-ում և ՄԱԿ-ում, գործնական համագործակցության ջանքերի վերաբերյալ տեղեկությունների, լավագույն գործելակերպերի և փորձի փոխանակումը։ Բացի այդ, համագործակցել Հայաստանի հետ՝ կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող օրենքներ և կարգավորումներ մշակելու ուղղությամբ, որոնք կհամապատասխանեն ԵՄ-ի հիմնական օրենսդրությանը։

- Ամրապնդել գործնական համագործակցությունը հակամարտությունների կանխարգելման և ճգնաժամերի կառավարման ոլորտում՝ նպաստելով ԵՄ-ի կողմից ղեկավարվող քաղաքացիական և ռազմական ճգնաժամերի կառավարման գործողություններին և առաքելություններին Հայաստանի մասնակցությանը՝ հիմնվելով **Մասնակցության շրջանակային համաձայնագրի** վրա։

- Ամրապնդել համագործակցությունը **ռազմավարական հաղորդակցության կարողությունների** զարգացման ուղղությամբ, այդ թվում՝ ամրապնդելով պետության և հասարակության դիմակայունությունն ապատեղեկատվության նկատմամբ, աջակցելով լրատվամիջոցների ազատության և բազմակարծության ամրապնդմանը, ընդլայնել և դիվերսիֆիկացնել

գործնական համագործակցության շրջանակները՝ ներառելով քաղաքացիական հասարակությունը, պետական դերակատարներին և այս ոլորտում գործող հաստատությունները:

- Ապահովել ոլորտային անհրաժեշտ փորձի փոխանակում և համագործակցություն **Եվրոպական անվտանգության և պաշտպանության քոլեջի** և ԵՄ այլ համապատասխան հաստատությունների ու մարմինների հետ:

- Խթանել երկկողմ և տարածաշրջանային համագործակցությունն **անվտանգության հարցերի լայն շրջանակի** շուրջ, ինչպիսիք են **անօրինական միգրացիայի կառավարումը, սահմանների կառավարումը**, **կարևորագույն ենթակառուցվածքների** պաշտպանությունն ու դիմակայունությունը, **կազմակերպված հանցավորության** դեմ պայքարը, ներառյալ՝ մաքսանենգության, մարդկանց թրաֆիքինգի և ապրանքների (ներառյալ՝ թմրամիջոցների, հրազենի և քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ) նյութերի) ապօրինի շրջանառության դեմ պայքարը: Խրախուսել համապատասխան անձնակազմի վերապատրաստումն, այդ թվում մասնավորապես՝ ԵՄ ՔԿՃՄ ոլորտներում Գերազանցության կենտրոնի նախաձեռնության և դրա Հարավարևելյան և Արևելյան Եվրոպայի հարցերով տարածաշրջանային քարտուղարության միջոցով, և ընդլայնել Հայաստանի մարմինների մասնակցությունը Սևծովյան ավազանի երկրների «Interreg» ծրագրի շրջանակներում սահմանների կառավարման շուրջ համագործակցության համատեղ նախագծերին:

- Աշխատանքներ տանել **ԵՄ ԸԱՔՔ հռչակագրերին, որոշումներին և գործողություններին Հայաստանի համապատասխանության** բարձրացման, ինչպես նաև **բազմակողմ ֆորումներում համագործակցության և փոխադարձ աջակցության** ամրապնդման ուղղությամբ:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Խթանել **ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության** սկզբունքների փոխադարձ հարգանքը, ինչպես սահմանված է ՄԱԿ-ի կանոնադրությունում և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում, այդ թվում՝ ԵՄ ԸԱՔՔ որոշումներին և հռչակագրերին Հայաստանի համապատասխանեցման, ինչպես նաև բազմակողմ ֆորումներում համագործակցության միջոցով՝ ըստ անհրաժեշտության։

2.3.3. Ահաբեկչության դեմ պայքար, զանգվածային ոչնչացման զենքի տարածման և զենքի ապօրինի արտահանման արգելք

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Համագործակցել **զանգվածային ոչնչացման զենքի** և դրանց փոխադրման միջոցների **տարածման դեմ պայքարի** ոլորտում՝ լիովին պահպանելով և իրականացնելով միջազգային զինաթափման և տարածման արգելքի մասին պայմանագրերի և համաձայնագրերի, ինչպես նաև այլ համապատասխան միջազգային պարտավորությունների շրջանակներում Կողմերի գործող պարտավորությունները։
- Լիարժեք օգտագործել **Հայաստանի** իրավասու մարմինների **և Եվրապոլի** միջև ձեռք բերված աշխատանքային պայմանավորվածությունն, այդ թվում՝ ապահովելով դրա ամբողջական իրականացումը՝ 2023 թվականի հունիսին Երևանում ստորագրված անվտանգ գծի (SIENA) ստեղծման մասին փոխըմբռնման հուշագրի և Փոխգործակցության մասին համաձայնագրի միջոցով։ Սա հնարավորություն կտա առավելագույնի հասցնելու տեղեկությունների փոխանակումն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հանցագործությունների ոլորտներում, մասնավորապես՝ ահաբեկչության և ծանր հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչական կազմակերպությունների, կազմակերպված հանցավոր խմբերի, նրանց գործունեության (ներառյալ՝ կիբեռհանցագործությունները և ֆինանսական ու տնտեսական հանցագործությունները) և նրանց աջակցության ցանցերի, ինչպես նաև թմրամիջոցերի ապօրինի

շրջանառության վերաբերյալ:

- Լիարժեք օգտագործել Հայաստանի և **Իրավապահ մարմինների վերապատրաստման ԵՄ գործակալության** (ՈԵՔ [CEPOL]) միջև ձեռք բերված աշխատանքային պայմանավորվածությունը՝ միաժամանակ առավելագույնի հասցնելով ՈԵՔ-ի գործունեությանը մասնակցելու հնարավորություններն, այդ թվում՝ կարողությունների զարգացման տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում:
- Շարունակել կիրառել **Ֆինանսական գործողությունների աշխատանքային խմբի (FATF)** կողմից սահմանված չափանիշները, շարունակել բարելավել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի՝ նրա համակարգի (ՓԼ/ԱՖ համակարգ) արդյունավետությունը:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Համագործակցել մարդու իրավունքների վրա հիմնված **ահաբեկչության դեմ պայքարի**, ներառյալ՝ ահաբեկչական հանցագործությունների իրավական սահմանման մասով միջազգային կոնսենսուսը խորացնելու հարցում, այդ թվում՝ խթանելով «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ահաբեկչական հանցագործությունների սահմանումների վերանայման վերաբերյալ համաձայնագրի կնքումը:
- Շարունակել կիրարկել Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի (ՄԱԿ ԱԽ) թիվ 2396 բանաձևը և մասնավորապես **փոխանակել տեղեկություններ՝ ահաբեկչության մեջ կասկածվող անձանց վերաբերյալ**, օտարերկրյա ահաբեկիչների նույնականացման, հայտնաբերման և քրեական հետապնդման նպատակով:
- Համագործակցել ռիսկերի վրա հիմնված **սահմանային վերահսկողության**

ոլորտում՝ ներմուծվող, արտահանվող կամ տարանցիկ տեղափոխվող ապրանքների անվտանգությունն ու ապահովությունը երաշխավորելու համար։

- Պայքարել **փոքր տրամաչափի և թեթև տեսակի զենքերի**, այդ թվում՝ դրանց զինամթերքի ապօրինի առևտրի դեմ՝ գործող միջազգային համաձայնագրերի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի շրջանակներում, ինչպես նաև այս ոլորտում կիրառվող այլ միջազգային փաստաթղթերի շրջանակներում ստանձնած պարտավորություններին համապատասխան։
- Շարունակել **համագործակցությունը սովորական զենքի արտահանման նկատմամբ վերահսկողության** ոլորտում՝ հաշվի առնելով ռազմական տեխնոլոգիաների և սարքավորումների արտահանման վերահսկողության վերաբերյալ ԵՄ ընդհանուր դիրքորոշումը։ Շարունակել համագործակցությունը ԵՄ-ի հետ զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի և դրանց պաշարների ոչնչացման ուղղությամբ։
- Շարունակել նպաստել **զենքի նկատմամբ վերահսկողության** և դրան առնչվող վստահության ամրապնդման պայմանավորվածությունների **իրականացմանը**, ինչպես նաև «Միջուկային զենքը չտարածելու մասին» պայմանագրի (ՄՉՊ) բոլոր երեք հիմնասյուների, «Քիմիական զենքի մասին» կոնվենցիայի (ՔԶԿ), «Կենսաբանական զենքի մասին» կոնվենցիայի (ԿԶԿ) և համապատասխան միջազգային համաձայնագրերի և այլ միջազգային պարտավորությունների շրջանակներում գործող այլ պարտավորությունների իրականացմանը։

2.4. Տնտեսական և ոլորտային համագործակցություն

ԵՄ-ն և Հայաստանը կհամագործակցեն **էներգետիկ, թվային և տրանսպորտային կապի** ամրապնդման, **կլիմայի չեզոքությանը և էներգետիկ անվտանգությանն անցման**, ինչպես նաև կառուցվածքային, այդ թվում՝

կարգավորող և անվտանգության հայեցակետերի վերաբերյալ բարեփոխումներն առաջ մղելու ուղղությամբ։ Էներգաարդյունավետության խթանումը, վերականգնվող էներգիայի արտադրությունն ու օգտագործումը, էլեկտրաէներգիայի ցանցի արդիականացումը և տարածաշրջանային էներգետիկ կապի բարելավումը կշարունակեն ամրապնդել Հայաստանի էներգետիկ անվտանգությունը՝ միաժամանակ նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները։ Իրենց միջազգային պարտավորություններին համապատասխան, մասնավորապես՝ Փարիզի համաձայնագրի շրջանակներում նրանք համատեղ կաշխատեն կլիմայի չեզոքության, շրջակա միջավայրի և կլիմայի հարմարվողականության ու դիմակայունության հասնելու ուղղությամբ՝ խթանելով ժամանակակից, ռեսուրսների առումով արդյունավետ, ածխածնից զերծ և շրջանաձև տնտեսությունը։ Նրանք կհամագործակցեն նաև այս նպատակներն առաջ մղելու շուրջ՝ **համապատասխան բազմակողմ ֆորումներում**։ Աղետների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման ոլորտում համագործակցությունն է՛լ ավելի կամրապնդվի։ «Գլոբալ դարպասներ» նախաձեռնության շրջանակներում **ռազմավարական ներդրումային ծրագրերի** բացահայտման և իրականացման արագացման ուղղությամբ համատեղ աշխատանքը կշարունակվի Հայաստան-ԵՄ ներդրումների համակարգման պլատֆորմի միջոցով։

2.4.1. Տրանսպորտային կապ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Օդային կապի բարելավման նպատակով վարչական կարգով կիրառել 2021 թվականին ստորագրված և Հայաստանի կողմից 2023 թվականի հունվարին վավերացված **«Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը**, ինչպես համաձայնեցված է 2017 թվականին ստորագրված Խորհրդակցությունների հուշագրում։
- Շարունակել աջակցության տրամադրումը Հայաստանի **ավիացիոն**

անվտանգության վերահսկողության հետ կապված կարողությունների զարգացման նպատակով՝ աջակցության համապատասխան միջոցառումների, այդ թվում՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող երկկողմ և տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացմամբ։

- Շարունակել բարելավել ԵՄ ավիացիոն օրենսդրության հետ **նորմատիվ իրավական ակտերի ներդաշնակեցման** մակարդակն, այդ թվում՝ Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության (ԱԱԵԳ) և ԵՄ անդամ պետությունների գործակալությունների հետ համագործակցության և վերջիններիս կողմից տրամադրված տեխնիկական աջակցության միջոցով։

- Շարունակել բարելավել ճանապարհային անվտանգությունը բազմապրոֆիլ մոտեցման միջոցով՝ ուշադրություն դարձնելով կանխարգելմանը և կատարման ապահովմանը։ Ընդունել և իրականացնել **ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարություն** և համապատասխան **գործողությունների ծրագիր**, ներառյալ՝ մասնավորապես ճանապարհային ենթակառուցվածքների անվտանգության չափանիշների բարելավմանն ուղղված ջանքերը։ Ակտիվորեն մասնակցել Թբիլիսիում գտնվող Արևելյան գործընկերության ճանապարհային անվտանգության տարածաշրջանային դիտակետի (RSO) գործունեությանը։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել բարելավել տրանսպորտի բոլոր տեսակների (օդային, ճանապարհային, երկաթուղային) **անվտանգությունը**։

- Շարունակել զարգացնել ցամաքային տրանսպորտային ենթակառուցվածքները՝ մասնավորապես իրականացնելով համատեղ համաձայնեցված առաջնահերթ նախագծերը, որոնք ներառված են Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի **(TEN-T)** ներդրումների ինդիկատիվ գործողությունների ծրագրում։

- Շարունակել աջակցել Հայաստանի ընդգրկմանն ավելի լայն **տարածաշրջանային տրանսպորտային ցանցերում**, ինչպիսին է Անդրկասպյան տրանսպորտային միջանցքը, համաձայն Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ բարձր ներկայացուցչի՝ «Սևծովյան տարածաշրջանի վերաբերյալ» ԵՄ ռազմավարական մոտեցման մասին համատեղ հաղորդագրության՝ միաժամանակ ընդգծելով Հայաստանի ներուժը որպես կամուրջ տարբեր տարածաշրջանների միջև, ինչպես այն առաջ է մղվում «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության շրջանակներում։
- Ուսումնասիրել Հայաստանում տարածաշրջանային տրանսպորտային կապի ոլորտում **ներդրումային հնարավորությունները**, ինչը նախատեսված է նաև «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության հիմքում ընկած Հայաստանի տարածաշրջանային քաղաքականության նոր մոտեցմամբ։

2.4.2. Էներգետիկա

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Մեծացնել համագործակցությունը և ջանքերն, այդ թվում՝ **էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի, ցանցային ենթակառուցվածքների, միջսահմանային կապերի** վերաբերյալ ծրագրերի իրականացման և անվտանգ ու կայուն, ցածր ածխածնային տեխնոլոգիաների ներդրման գործում **մատակարարումներից կախվածության նվազեցման** միջոցով։ Դիտարկել էներգիայի պահպանման և երկրաջերմային էներգիայի ոլորտում հետագա համագործակցության հնարավորությունները։
- Շարունակել աջակցել **«Սևծովյան էլեկտրական մալուխ» նախագծում** Հայաստանի ներգրավմանը։
- Ապահովել **սթրես-թեստերի վերաբերյալ մնացյալ բոլոր առաջարկությունների ժամանակին իրականացումը**՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) շահագործման ընթացքում առավելագույն անվտանգություն ապահովելու համար։ Շարունակել ՀԱԷԿ-ի **միջուկային անվտանգության բարելավման**

ազգային գործողությունների ծրագրի իրականացման կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունների կանոնավոր փոխանակումը մինչև բոլոր գործողությունների ավարտը։

- ԵՄ շարունակական աջակցությամբ մշակել **Հայկական ատոմային էլեկտրակայանը շահագործումից հանելու** մասով համապարփակ ռազմավարություն, ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր՝ համաձայն Հայաստանի 2040 թվականի էներգետիկ ռազմավարության։ Միաժամանակ աջակցել միջուկային անվտանգությունն ապահովելու Հայաստանի ջանքերին, քանի դեռ Հայկական ատոմային էլեկտրակայանը շահագործվում է՝ միաժամանակ աստիճանաբար մոտարկելով միջուկային անվտանգության, թափոնների կառավարման և ճառագայթային պաշտպանության վերաբերյալ Եվրատոմի օրենսդրությանը, ինչպես նախատեսված է ՀԸԳՀ-ում, ինչպես նաև պահպանելով այլ միջազգային փաստաթղթերի պահանջները, ինչպիսիք են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) միջուկային անվտանգության չափանիշները և անվտանգության ուղեցույցները։
- Միաժամանակ ուշադրություն դարձնել Հայաստանի՝ միջուկային էներգիայի արտադրության նոր հզորությունների կայուն անցմանը, որի նպատակն է բարձրացնել երկրի էներգետիկ անվտանգությունն ու անկախությունը։
- 2024-2029 թվականների ընթացքում աստիճանաբար առաջ մղել **Հայաստանի էներգետիկայի և միջուկային անվտանգության օրենսդրության մոտարկումը Միության օրենսդրությանը՝** ՀԸԳՀ-ի համաձայն և Հայաստանի 2040 թվականի էներգետիկ ռազմավարությանը համահունչ։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ջանքերը **Հայաստանի էներգետիկայի ոլորտի դիվերսիֆիկացման** ուղղությամբ, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի հետ

կապված նախաձեռնությունների միջոցով։

- Ակտիվացնել **Էներգետիկ համայնքի** և Հայաստանի միջև համագործակցությունը։
- Շարունակել աջակցել Հայաստանին **միջուկային անվտանգության մշակույթի** ամրապնդման և օգտագործված միջուկային վառելիքի ու ռադիոակտիվ թափոնների պատասխանատու և անվտանգ կառավարման հարցում։
- Ուսումնասիրել էներգետիկայի ոլորտում հետագա **ներդրումային հնարավորությունները՝** մատակարարման անվտանգության և դիվերսիֆիկացման, ինչպես նաև տարածաշրջանում ընդհանուր էներգետիկ անվտանգության համար։

2.4.3. Թվային կապ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ԵՄ-ի և Հայաստանի, ինչպես նաև Արևելյան գործընկերության տարածաշրջանի միջև **թվային շուկաների ներդաշնակեցումը**։ Աջակցել **Հայաստանի թվայնացման 2021-2025 թվականների ռազմավարության** իրականացմանը, որը ներառում է էլեկտրոնային կառավարումը, թվային տնտեսությունը և թվային հասարակությունը, ինչպես նաև համագործակցել 2026-2030 թվականների նոր ռազմավարական ճանապարհային քարտեզի մշակման ուղղությամբ։
- Շարունակել ամրապնդել **տրանսպորտային կապի թվայնացման** գործընթացը, ներառյալ՝ էլեկտրոնային լոգիստիկան, տրանսպորտային փաստաթղթերի թվայնացումը, և դիտարկել թվային կապի այլ նախաձեռնություններ։
- Աշխատանք տանել Հայաստան-ԵՄ **թվային կապի** ամրապնդման ուղղությամբ, այդ թվում՝ հաշվի առնելով Հայաստանի մասնակցությունը Սևծովյան թվային կապի նախագծերին՝ համաձայն Եվրոպական

հանձնաժողովի և ԵՄ բարձր ներկայացուցչի՝ «Սևծովյան տարածաշրջանի վերաբերյալ» ԵՄ ռազմավարական մոտեցման մասին համատեղ հաղորդագրության «Աճ և բարգավաճում» հենասյան:

- Ուսումնասիրել **«Թվային Եվրոպա» ծրագրին** Հայաստանի մասնակցության հնարավորությունը:
- Համագործակցել **կիբեռանվտանգության ռազմավարությունը** մշակելու և այն իրականացնելու կարողությունների զարգացման ուղղությամբ, ներառյալ՝ տեղեկատվական համակարգերի պաշտպանության լուծումների մշակումը, ինչպես նաև սպառնալիքների ժամանակին հայտնաբերումն ու վերացումը:
- Ուսումնասիրել ԵՄ-ի և Հայաստանի միջև կիբեռանվտանգության հարցերի շուրջ երկխոսության ԵՄ հարթակի ստեղծման հնարավորությունը:
- Խորացնել **տվյալների փոխգործակցության, տվյալների փոխանակման և թվային ինքնության** վերաբերյալ համագործակցությունը տեխնիկական և նորմատիվային մակարդակներում՝ որպես ԵՄ-ի հետ միջսահմանային թվային ծառայությունների բարելավման կարևոր գործոններ:
- Սերտորեն համագործակցել **թվային միասնական շուկայի** առավելությունները Հայաստանում տարածելու ուղղությամբ: Սա ներառում է էլեկտրոնային նույնականացման և էլեկտրոնային վստահության ծառայությունների ներդրումը՝ ԵՄ թվային ինքնության շրջանակին համապատասխան և վստահության ծառայությունների փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագրի առնչությամբ առաջընթաց գրանցելու ուղղությամբ:
- **Զգտել համապատասխանեցնել** Հայաստանի թվային տնտեսությունը ԵՄ չափանիշներին:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Աջակցություն ցուցաբերել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի վերանայման և լրամշակման հարցում՝ համապատասխանեցնելով այն այս ոլորտում ԵՄ օրենսդրությանը:
- Ակտիվացնել թվային անցումը խթանելու նպատակով «Գլոբալ դարպասներ» ռազմավարության շրջանակներում առաջատար նախագծերի իրականացմանն ուղղված համատեղ ջանքերը:

2.4.4. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Աստիճանաբար **զարգացնել** բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում **համագործակցությունը**:
- Քայլեր ձեռնարկել **Միության տիեզերական ծրագրի**, դրա բաղադրիչների և ծառայությունների շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցություն սկսելու ուղղությամբ՝ համաշխարհային մարտահրավերներին դիմակայելու գործում հայկական գիտական ներուժը ներգրավելու նպատակով:
- Օգտագործել և խթանել ԵՄ մակարդակով առկա նախաձեռնություններն՝ **ի աջակցություն այնպիսի նորարարական և ձեռնարկատիրական ծրագրերի**, որոնց Հայաստանն իրավունք ունի մասնակցելու (օրինակ՝ ԵՆԽ ծրագրեր, CASSINI հաքաթոններ):
- Ուսումնասիրել **արբանյակային կապի** ոլորտում առևտրային հիմունքներով համագործակցությունը խրախուսելու ուղիները:

Միջանկյալ առաջնահերթություններ

- Փոխանակել տեղեկություններ՝ Հայաստանում **բարձր տեխնոլոգիական արդյունաբերության չափանիշների ներդաշնակեցման** վերաբերյալ, և բարելավել միջազգային լավագույն գործելակերպերին Հայաստանի համապատասխանությունը:

- Տեղեկությունների փոխանակում **արհեստական բանականության և անօդաչու թռչող սարքերի տեխնոլոգիաներին առնչվող կարգավորումների** մշակման ուղղությամբ Հայաստանի ջանքերի վերաբերյալ:

2.4.5. Շրջակա միջավայր

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Բարելավել բնապահպանական կառավարումը՝ **շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման** վերաբերյալ հիմնական օրենսդրության ներդրման միջոցով:
- Շարունակել կատարելագործել **թափոնների կառավարմանն** առնչվող համապատասխան **իրավական շրջանակը** և հատկացնել անհրաժեշտ ռեսուրսներ՝ **քիմիական նյութերի** վերաբերյալ համապարփակ օրենսդրության մշակման համար:
- Մշակել և ներդնել ազգային և տեղական մակարդակներում **թափոնների կառավարման** համապարփակ **համակարգ**՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ շրջանաձև տնտեսության վերաբերյալ, ինչպես նաև թափոնների գործածության ստորակարգությանը համապատասխան նոր օբյեկտների ստեղծման միջոցով:
- Շարունակել ջրի, օդի որակի և արդյունաբերական արտանետումների վերաբերյալ հիմնական օրենսդրության ներդնումը:
- Համագործակցել Կունմինգ Մոնրեալ գլոբալ կենսաբազմազանության շրջանակի գլոբալ թիրախներին հասնելու, այդ թվում՝ Կենսաբազմազանության արդյունավետ ազգային ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի ու կենսաբազմազանության ոլորտում ազգային նպատակների մշակման և իրականացման ուղղությամբ՝ COP17-րդ համաժողովից առաջ:
- Շարունակել աշխատանքը միջկառավարական բանակցային կոմիտեի միջոցով՝ պլաստիկ արտադրանքից առաջացած, այդ թվում՝ ծովային

միջավայրում աղտոտման վերաբերյալ պարտադիր իրավական ուժ ունեցող փաստաթղթի (այսինքն՝ Պլաստիկ աղտոտման դեմ պայքարի գլոբալ համաձայնագիր) մշակման ուղղությամբ։

- Հզորացնել բնության հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական կառավարումը։ Զարգացնել շրջակա միջավայրի պահպանության ծառայության կարողություններն՝ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի անտառահատումները դադարեցնելու նպատակով։
- Բարելավել անտառների կայուն կառավարումն՝ Անտառային օրենսգրքի ներդրման միջոցով։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Լիարժեք կերպով օգտագործել **կլիմայաչեզոք և շրջանաձև տնտեսության** ներուժը և մշակել **ածի** համապարփակ **քաղաքականություն** բոլոր համապատասխան ոլորտներում, օրինակ՝ շրջանաձև տնտեսության սկզբունքները թափոնների կառավարման ազգային համակարգում ներառելու միջոցով։
- Շարունակել ապահովել մաքուր և առողջ միջավայր ունենալու իրավունքը, բարելավել **շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկություններին** հանրության հասանելիության և շրջակա միջավայրին առնչվող հարցերի հետ կապված որոշումների կայացման գործընթացներին **հանրության մասնակցության** մեխանիզմները՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետագա ներգրավման և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով։

2.4.6. Գործողություն հանուն կլիմայի

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Իրականացնել Փարիզի համաձայնագրում **Հայաստանի՝ ազգային մակարդակով սահմանված՝ թարմացված 2021-2030 թվականների**

ներդրումները։ Ընդունել նոր, հավակնոտ, **ազգային մակարդակով սահմանված ներդրումներ 2030 թվականին հաջորդող ժամանակահատվածի համար**՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխությունների մասին» շրջանակային կոնվենցիայի (ՄԱԿ ԿՓՇԿ) COP30-րդ համաժողովից առաջ։

- Ներդնել և թարմացնել **Ազգային հարմարվողականության ծրագիրը**։
- Որպես Հայաստանում **ածխածնի գնագոյացմանն ուղղված** նախնական **քայլ**՝ մշակել ջերմոցային գազերի արտանետումների մշտադիտարկման, հաշվետվությունների ներկայացման և ստուգման վերաբերյալ անհրաժեշտ օրենսդրություն ինչպես կայանների մակարդակով, այնպես էլ ենթակայանների մակարդակով՝ ըստ կիրառելիության, և ապահովել դրա իրականացման համար բավարար վարչական հնարավորությունները։
- Ապահովել **«Կլիմայի մասին» ՀՀ օրենքի** ժամանակին ընդունումը և արագ իրականացումը։
- Օգտագործել **Երկրի դիտարկման՝ կլիմային վերաբերող** բաց տվյալները ԵՄ «Կուպեռնիկուս» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև կլիմայական մոդելները, ընդլայնել եղանակի և կլիմայի կանխատեսման ու կլիմայի վերաբերյալ Հայաստանի քաղաքականությունը՝ միաժամանակ տրամադրելով սեփական ընթացիկ և նախկին օդերևութաբանական տվյալները։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Հիմնվելով ներկա և ապագա ջանքերի վրա՝ ներպետական մակարդակում ձեռնարկել միջոցառումներ՝ 2030 թվականին հաջորդող ժամանակահատվածի համար ազգային մակարդակով սահմանված նոր ներդրումների իրականացման և ձեռքբերման, ինչպես նաև Փարիզյան համաձայնագրի շրջանակներում **մինչև 2050 թվականը ցածր արտանետումների մակարդակով զարգացման երկարաժամկետ ռազմավարության** իրականացման

նպատակով՝ սահմանելով կոնկրետ քաղաքականություն և միջոցառումներ բոլոր ոլորտներում, և ձգտել մինչև 2050 թվականը կլիմայական չեզոքության հասնելուն: Կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործողությունները ներառել ոլորտային քաղաքականություններում ու միջոցառումներում և ամրապնդել տարբեր մարմինների կարողությունները՝ բոլոր ոլորտներում կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործողությունների իրականացման նպատակով:

- Շարունակել ընդլայնել «Քաղաքապետերի դաշնագիրը» Հայաստանում, ինչպես նաև ընդլայնել տեղական իշխանությունների լիազորությունները՝ տեղական մակարդակով կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործողությունները խթանելու նպատակով:

- Հիմնվելով մշտադիտարկման, հաշվետվությունների ներկայացման և ստուգման ամուր շրջանակի վրա՝ դիտարկել **ածխածնի գնագոյացման** հնարավորությունները:

- Ներպետական մակարդակում ձեռնարկել գործողություններ՝ **Մեթանի արտանետումների կրճատման գլոբալ նախաձեռնությունն** իրականացնելու համար և նպաստել մինչև 2030 թվականը մեթանի գլոբալ արտանետումներն առնվազն 30%-ով կրճատելուն՝ 2020 թվականին առկա մակարդակի համեմատ:

- Ներդնել Հայաստանի **ազգային հարմարվողականության համապարփակ ծրագիրը** և հարմարվողականության մասով ոլորտային ռազմավարությունները՝ զարգացնելով անհրաժեշտ կարողություններն ու ապահովելով տեխնոլոգիաների փոխանցումն, ամրապնդել տնտեսության և տեղական համայնքների՝ կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունը և նվազեցնել կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած աղետների ռիսկը:

- Շարունակել ձեռնարկել քայլեր՝ **Մոնրեալի արձանագրության**, այդ թվում՝ Կիգալիի փոփոխության համաձայն Հայաստանի ստանձնած

պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Անհրաժեշտ է արագացնել այս ջանքերը՝ ֆտորացված գազերի և օզոնային շերտը քայքայող նյութերի վերաբերյալ ԵՄ կանոնակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Ձեռնարկել քայլեր **Հովացման համակարգերից արտանետումների կրճատման գլոբալ նախաձեռնության** իրականացման ուղղությամբ:

- Խթանել անցումը զրոյական արտանետումներով տրանսպորտային միջոցների օգտագործմանը և իրականացնել **էլեկտրական շարժունակությանն ուղղված նախագծեր** Հայաստանում:

2.4.7. Հանրային առողջապահություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Բարելավել **առաջնային առողջապահական ծառայությունների** որակն ու մատչելիությունը՝ հիվանդությունների կանխարգելման և կյանքի որակի բարելավման նպատակով, ուշադրություն դարձնելով խոցելի իրավիճակում գտնվող անձանց:
- Գործադրել առավելագույն ջանքեր, որպեսզի Հայաստանը միանա **«Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտրի վերացման մասին» արձանագրությանը**:
- Շարունակել իրականացնել **Առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունն**, այդ թվում՝ բուժօգնության որակի ապահովման միջոցառումների և առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրումը, ինչպես նաև համագործակցել Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի ստեղծման ուղղությամբ:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ապահովել ակտիվ մասնակցություն **ԵՄ առողջապահական անվտանգության նախաձեռնությանը**՝ համագործակցելով Հիվանդությունների կանխարգելման

և վերահսկման եվրոպական կենտրոնի (ՀԿՎԵԿ) հետ։

- Հարմարեցնել և իրականացնել **առողջապահության համակարգի միջնաժամկետ/երկարաժամկետ ռազմավարությունը՝ հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդությունից (Covid-19) հետո ստեղծված իրողություններն**, այդ թվում՝ ուժեղացնելով հիվանդությունների բռնկումների համաճարակաբանական վերլուծության/հետազոտության, տվյալների մոդելավորման և վիճակագրության հարցերում Հայաստանի կարողությունները՝ «Մեկ առողջություն» մոտեցմանը համապատասխան։
- Ամրապնդել ծխախոտի դեմ պայքարի քաղաքականությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև դրանց խիստ կիրառումն՝ ի կատարումն **ՀԸԳՀ** շրջանակներում ԵՄ օրենսդրության վերափոխման և կիրառման մասով Հայաստանի հանձնառության, ինչպես նաև Հայաստանի՝ **Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայից** բխող պարտավորությունների։
- Վերջնական տեսքի բերել **Դեղագործական տեսչության համագործակցության (ԴՏՀ)** սխեմային անդամակցելու համար Հայաստանի կողմից ներկայացվող հայտը։

2.4.8. Քաղաքացիական պաշտպանություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել բարելավել **միջգերատեսչական և միջնախարարական համակարգումը**՝ միջազգային օգնություն հայցելիս և ստանալիս (հատկապես՝ ԵՄ Քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի միջոցով)։
- Ընդունել **«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» օրենքը**։
- Շարունակել գործադրել ջանքեր՝ Ներքին գործերի նախարարության կազմում **Արտակարգ իրավիճակների կանչերի/կառավարման միասնական կենտրոն** ստեղծելու համար՝ արտակարգ իրավիճակների/միջադեպերի արձագանքման

գործընթացի արդյունավետությունն ու համակարգումը բարելավելու նպատակով:

- Շարունակել բարեփոխումներ իրականացնել **Փրկարարական ծառայությունների** ոլորտում, այդ թվում՝ կատարելագործելով բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման քաղաքականությանն առնչվող օրենսդրական դաշտը (օրինակ՝ աղետների ապահովագրության համակարգ և կամավորություն):
- Շարունակել ԵՄ-ի և Հայաստանի միջև **արդյունավետ համագործակցությունը** բնակչության պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ բնական և մարդածին աղետների **կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման** նախաձեռնությունների շրջանակում:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Սահմանել, թե **ԵՄ Քաղաքացիական պաշտպանության մեխանիզմի որ գործիքներից** կարող է օգտվել Հայաստանն՝ աղետների նկատմամբ դիմակայունությունն առավել զարգացնելու նպատակով:
- Շարունակել իրականացնել Հայաստանի **աղետների ռիսկի կառավարման** ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը:

2.4.9. Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- 2025 թվականին իրականացնել Հայաստանի ազգային **վիճակագրական համակարգի** փորձագիտական գնահատում:
- Շարունակել մշակել ողջամիտ քաղաքականություն՝ **մակրոտնտեսական կայունությունն** ամրապնդելու նպատակով՝ մասնավորապես ապահովելով հարկաբյուջետային ամուր դիրք և ֆինանսական կայուն համակարգ:
- Շարունակել աջակցել **կայուն և ներառական տնտեսական աճին**:
- Շարունակել բարելավել **պետական ֆինանսների կառավարումը**:

- Շարունակել պահպանել **Կենտրոնական բանկի** արդյունավետ կառավարումը, ներառյալ՝ անկախության պահպանումը:
- Շարունակել խթանել **փոքր և միջին ձեռնարկությունների հասանելիությունը ֆինանսական միջոցներին**, այդ թվում՝ «Գլոբալ դարպասներ» ռազմավարության շրջանակներում իրականացվող ներդրումների միջոցով՝ Հայաստանի մրցունակությունն ու արտադրողականությունը բարձրացնելու նպատակով:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Դիտարկել **ձեռնարկատիրության խթանման և բիզնեսների**, մասնավորապես՝ ՓՄՁ-ների **մրցունակության բարձրացմանն** ուղղված ԵՄ ֆինանսական գործիքներին Հայաստանի մասնակցության հնարավորությունը:
- Ձեռնարկել քայլեր ֆինանսական էկոհամակարգերի համար ֆինանսական հաստատությունների կայուն ֆինանսների և կարողությունների տաքսոնոմիա մշակելու ուղղությամբ՝ կլիմայական չեզոքության պահանջներին և բնապահպանական նպատակներին համապատասխան:
- Բարելավել **գործարար միջավայրն**, այդ թվում՝ ոչ ֆորմալ հատվածի դեմ պայքարելու միջոցով:
- Նպաստել **ձեռնարկատիրությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երիտասարդներին՝** խթանելու համար՝ i) բիզնես ռազմավարությունների մշակումը, ii) սթարթափների ստեղծումը և զարգացումը Հայաստանի մարզերում, և iii) աքսելերացիոն և ինկուբացիոն ծրագրերը:
- Ամրապնդել հուսալի **վիճակագրության** արտադրությունն ու տարածումն, այդ թվում՝ ապացույցների վրա հիմնված որոշումների կայացման համար:
- Ընդունել **զբաղվածության** ազգային **ռազմավարությունը**:
- Բարձրացնել **պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների**

գործունեության և ֆինանսական հոսքերի թափանցիկության աստիճանը:

2.4.10. Գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Հաղթահարել արդյունավետ կերպով **կանաչ և կայուն գյուղատնտեսությանն** անցնելու մասով առկա մնացյալ խոչընդոտներն, այդ թվում՝ գործընթացում ներգրավելով ոլորտի համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերին:
- Ապահովել **Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության** ընդունումը՝ շեշտը դնելով հավասար զարգացման վրա:
- Շարունակել համագործակցությունը «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման» (LEAD) ծրագրի շրջանակներում՝ ԵՄ «LEADER» (գյուղական տնտեսության և զարգացման գործողությունների միջև կապեր) **գյուղական համայնքների զարգացման** ծրագիրը Հայաստանում փորձարկելու համար՝ տեղական ակտիվ խմբերի (ՏԱԽ-եր) կայուն ֆինանսավորման մեխանիզմներ ստեղծելու նպատակով:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Առաջ մղել **ապակենտրոնացման** օրակարգն, այդ թվում՝ հարկաբյուջետային ապակենտրոնացումը, և զարգացնել տեղական իշխանությունների՝ գյուղական վայրերում, մասնավորապես՝ ամենահեռավոր գյուղական վայրերում հանրային բոլոր ծառայությունների մատուցումն ապահովելու կարողությունները:
- Խթանել **կլիմայական առումով խելացի գյուղատնտեսությունը** և նպաստել դրա զարգացմանը՝ շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ ուղեցույցներին, էներգաարդյունավետ տեխնոլոգիաներին և գյուղատնտեսության ոլորտում այլ բարեխիղճ գործելակերպերին համապատասխան, արդիականացնել և բարելավել գյուղատնտեսական

արտադրանքի արտադրությունը, վերամշակումը և պահպանումը, զարգացնել այնպիսի գյուղատնտեսություն, որը և՛ արդյունավետ է, և՛ կայուն, և խթանել ռեսուրսներ խնայող մշակման տեխնոլոգիաների ներդնումն, արոտավայրերի երկարաժամկետ արդյունավետ կառավարումը՝ Հայաստանի գյուղատնտեսության արտադրողականությունն, ավելացված արժեքը և մրցունակությունը բարձրացնելու նպատակով:

- Ընդլայնել համագործակցությունը **սննդի անվտանգության** ոլորտում, այդ թվում՝ համապատասխան օրենսդրությունն արդիականացնելու հարցում:

2.4.11. Համախմբվածության քաղաքականություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել մասնակցությունը և խթանել համագործակցությունը **«Interreg NEXT» Սևծովյան ավազանի ծրագրի** շրջանակներում, ներառյալ՝ հայաստանյան գործընկերներին և շահագրգիռ կողմերին ցուցաբերվող աջակցությունը՝ կապույտ տնտեսության, կլիմայական դիմակայունության և շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաև մարդկանց միջև փոխգործակցության ոլորտում համագործակցության նախագծերի իրականացումը հնարավոր դարձնելու և հեշտացնելու նպատակով:
- Հզորացնել **«Interreg NEXT» Սևծովյան ավազանի ծրագրի** համակարգման և իրականացման գործում **ներգրավված ազգային մարմինների կարողությունները** ծրագրի մակարդակով, իսկ հայաստանյան շահառուների կարողությունները՝ նախագծի մակարդակով՝ ծրագրի համար ԵՄ իրավական շրջանակի կիրառումն ապահովելու համար: Սա պետք է ներառի ազգային վերահսկիչ մարմինների կարողությունների ընդլայնումը ծրագրի կառավարման և հսկողության համակարգի պատշաճ գործունեության համար:

- Ամրապնդել **պետական հատվածի համագործակցությունը** Սևծովյան ավազանի տարածքում համատեղ նախաձեռնությունների և նախագծերի միջոցով՝ ձևավորելով հուսալիություն և վստահություն Սև ծովի ամբողջ տարածքում:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Առաջ մղել **ապակենտրոնացման օրակարգը** և ձևավորել տեղական իշխանությունների՝ տարածքային համագործակցության ծրագրերի նախապատրաստմանն ու իրականացմանը, ծրագրերի նախագծմանը, մշտադիտարկմանը, հաշվետվությունների ներկայացմանը, ծրագրերի գնահատմանը և ԵՄ դրամական միջոցների ֆինանսական պատշաճ կառավարմանը մասնակցելու կարողությունները:

2.4.12. Ռազմավարական հաղորդակցություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել համագործակցությունը բարեփոխումների, այդ թվում՝ **«Ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության»** բարեփոխումների իրականացման շրջանակներում:
- Զարգացնել համագործակցությունը՝ Հայաստան-ԵՄ համագործակցության **տեսանելիությունը** բարձրացնելու, **ընդհանուր արժեքները** խթանելու և տարբեր ոլորտներում Հայաստան-ԵՄ ամուր գործընկերության **դրական ազդեցությունը** բացատրելու համար:
- Ամրապնդել համագործակցությունը ռազմավարական հաղորդակցության հարցերում և պայքարել արտաքին տեղեկատվական մանիպուլյացիաների և միջամտությունների (**ԱՏՄՄ**) դեմ՝ կառույցների և որոշում կայացնող անձանց նկատմամբ հանրային վստահության մակարդակը բարձրացնելու և սոցիալական համախմբվածությունն ուժեղացնելու համար:
- Աշխատանքներ տանել **տեղեկատվության տիրույթ ստեղծելու** ուղղությամբ,

այդ թվում՝ անկախ մեդիային աջակցության, մեդիագրագիտության ծրագրերի իրականացման, ինչպես նաև լրագրողների մասնագիտական զարգացմանը նպաստելու միջոցով:

2.4.13. Հանքարդյունաբերություն և կենսական նշանակության հանքանյութեր

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ամրապնդել համագործակցությունը **Եվրոպական երկրաբանական ծառայության** (EuroGeoSurveys) հետ:
- Դիտարկել «EuroGeoSurveys»-ին անդամակցելու հարցը:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Համատեղ ուժերով իրականացնել Հայաստանի առկա երկրաբանական տեղեկությունների **թվայնացումը** (EuroGeoSurveys):
- **Թվայնացված տեղեկությունները հրապարակել** առցանց՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:
- Ուսումնասիրել Երկրաբանական ծառայության **հեռավար զոնդավորման միջոցների** կիրառությունն՝ առկա տեղեկությունները համալրելու և դրանց հուսալիությունը գնահատելու նպատակով:
- Համագործակցել **երկրաբանական հետազոտությունների և հանքային ռեսուրսների ուսումնասիրության** ոլորտում՝ շեշտը դնելով Հայաստանում կենսական նշանակության հումքի ուսումնասիրության վրա, ստեղծելով հնարավորություններ՝ ժամանակակից մեթոդներ և գործիքներ ներդնելու և կիրառելու համար:
- Նպաստել Հայաստանի բնական ռեսուրսների հաշվառման և կառավարման գործող համակարգի **ներդաշնակեցմանը** Միավորված ազգերի կազմակերպության Ռեսուրսների շրջանակային դասակարգման հետ (UNFC):

- Աստիճանաբար **վերականգնվող էներգիայի** անցման համաշխարհային քաղաքականության շրջանակներում համագործակցել կենսական նշանակության հանքանյութերի նոր պաշարների հայտնաբերման և առկա պաշարների շահագործման ոլորտներում:

2.4.14. Զբոսաշրջություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Նպաստել **պատասխանատու և ներառական զբոսաշրջության զարգացման,** այդ թվում՝ մատչելի զբոսաշրջային ծառայությունների և թվային գործիքների վերաբերյալ մոտեցումների հարցում լավագույն գործելակերպերի փոխանակմանն ու փորձի տարածմանը:
- Ամրապնդել համագործակցությունը զբոսաշրջային բազմազան ուղղությունների, արտադրանքների և ծառայությունների **բացահայտմանն ու խթանմանն** աջակցելու հարցում:
- **Ընդլայնել համագործակցությունը** զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ մասնավոր հատվածի միջև՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում նորարարությունը և մրցունակությունը խթանելու համար:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Աջակցել զբոսաշրջության **կայուն քաղաքականությունների և ռազմավարությունների** մշակմանն ու իրագործմանը՝ դրանք համապատասխանեցնելով Զբոսաշրջության անցումային ուղուն՝ ապահովելու համար ավելի դիմակայուն և թվային զբոսաշրջային էկոհամակարգ՝ ուշադրություն դարձնելով մատչելիությանը, բնապահպանական առումով կայուն գործելակերպերին և մշակութային ժառանգության պաշտպանությանը:
- Բացահայտել և **հաղթահարել ճանապարհորդական ծառայություններից**

օգտվելու մասով առկա խոչընդոտները՝ բարելավելով շուկայի հասանելիությունը և խթանելով զբոսաշրջային հոսքերը երկու տարածաշրջանների միջև, ներառյալ՝ գիտելիքների փոխանակման և կարողությունների զարգացման միջոցով:

2.5. Առևտուր և առևտրին առնչվող հարցեր

ԵՄ-ն և Հայաստանն ընդունում են, որ ՀԸԳՀ-ի շրջանակներում նորմատիվ իրավական բազայի արդյունավետ համապատասխանեցումը կնպաստի նրանց միջև **առևտրի ամրապնդմանը**, ինչպես նաև կօգնի **Հայաստանի արտահանումների և ներկրումների հետագա դիվերսիֆիկացմանը**: Կողմերը նաև կամրապնդեն առևտրին առնչվող քաղաքականության մշակման հարցերում թափանցիկություն ապահովելու, տեղեկություններ փոխանակելու և համապատասխան վերապատրաստումներ տրամադրելու ուղղությամբ իրենց հանձնառությունների իրականացումը:

2.5.1. Ապրանքների առևտուր և մաքսային հարցեր

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Համատեղ աշխատանքներ տանել **Հայաստանի արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացումը** զգալիորեն ավելացնելու և դյուրացնելու ուղղությամբ, ներառյալ՝ նոր արտադրանքների արտահանումը ԵՄ շուկա:
- Շարունակել սերտ համագործակցությունը **ԵՄ պատժամիջոցների շրջանցումից խուսափելու** նպատակով, այդ թվում՝ փորձագիտական աջակցության և տեղեկությունների փոխանակման միջոցով:
- Շարունակել **առևտրի վերաբերյալ վիճակագրական տվյալների փոխանակումը**:
- Հետևել Հայաստանի՝ **«Տարանցման ընդհանուր գործընթացի մասին» կոնվենցիայում** դիտորդ դառնալու հարցման ընթացքին և շարունակաբար

միմյանց տեղեկացնել երկակի օգտագործման ապրանքների վիճակագրության, ինչպես նաև **մաքսային օրենսդրության** ոլորտում տեղի ունեցող բոլոր զարգացումների մասին:

- Բացահայտել և գնահատել **սակագնային հնարավոր նվազեցումների** տնտեսական արժեքը՝ Հայաստանի որոշակի արտահանումների համար: Համատեղ աշխատանքներ տանել **ոչ սակագնային առևտրային արգելքների**, օրինակ՝ սանիտարական և բուսասանիտարական (ՍԲՍ) միջոցառումների, ինչպես նաև առևտրի տեխնիկական խոչընդոտների (ԱՏԽ-ներ) նվազեցման ուղղությամբ:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել **Հայաստանի մաքսային մարմինների արդիականացումը**, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի արդիականացումն ու պարզեցումն՝ ապահովելով խարդախությունների դեմ պայքարի արդյունավետ միջոցների առկայությունը: Ուսումնասիրել առևտրի դյուրացման նոր հնարավորությունները:

2.5.2. Տեխնիկական կանոնակարգեր, ստանդարտացում և հարակից ենթակառուցվածքներ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Զարգացնել **չափանիշների և տեխնիկական կանոնակարգերի** կառավարման ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ԵՄ ուղեցույցների կիրառմամբ:

- Բարելավել **Հայաստանի հավատարմագրման մարմնի** և հավատարմագրման եվրոպական մարմինների միջև համագործակցությունը, ներառյալ՝ վերապատրաստումները կամ կարողությունների զարգացումը՝ ըստ կիրառելիության:

- Ամրապնդել Հայաստանի **չափագիտության** մարմնի և չափագիտության եվրոպական մարմինների միջև համագործակցությունը:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Բացահայտել այն հնարավոր ոլորտները, որտեղ կարող է տրամադրվել հավելյալ աջակցություն՝ ԵՄ չափանիշների/տեխնիկական կանոնակարգերի հետ **համապատասխանություն** ապահովելու նպատակով:

2.5.3. Սանիտարական և բուսասանիտարական (ՍԲՍ) միջոցառումներ

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Ձեռնարկել քայլեր **սննդամթերքի անվտանգության վերահսկողության ենթակառուցվածքը, համակարգը և սարքավորումներն** ավելի հզորացնելու ուղղությամբ, այդ թվում՝ թվայնացման միջոցով և դիտարկելով սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում վերահսկողության աշխատանքներում ներգրավված մասնագետների վերապատրաստման հնարավորությունը:
- Ընդլայնել համագործակցությունը՝ դյուրացնելու Հայաստանից ԵՄ **ձկնատեսակների արտահանման** գործընթացը, և ձեռնարկել համատեղ քայլեր՝ թույլատրվող ձկնային արտադրանքի ցանկում նոր տեսակներ ընդգրկելու վերաբերյալ Հայաստանի՝ ԵՄ արտահանելու համար հարցմանը հետևելու ուղղությամբ:
- Իրականացնել համագործակցություն Հայաստանում սննդի և կերակուրի, ինչպես նաև կենդանիների և բույսերի առողջության անվտանգության համար **վաղ ահազանգման համակարգերի** մշակման ուղղությամբ:
- Բարելավել **թունաքիմիկատների** մնացորդների կառավարումը և դրանց հետագծելիությունը:
- Փոխանակել տեղեկություններ՝ **ռիսկերի** գիտահեն **գնահատման** օրենսդրական պահանջների և դրանց իրագործման վերաբերյալ:
- Նպաստել սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենսդրության մոտարկմանը՝ նպատակ ունենալով խթանելու **ագրոսննդային արտադրանքի**

առևտրի դիվերսիֆիկացումը:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ապահովել առաջընթաց ԵՄ շուկա **լրացուցիչ սննդամթերք** արտահանելու **թույլտվություն** ձեռք բերելու գործընթացում:
- Կազմակերպել **տեղեկատվական արշավներ** համապատասխան գերատեսչությունների, ձեռնարկատիրական և հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) համար՝ ԵՄ շուկա մուտք գործելու պահանջների վերաբերյալ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության համար՝ սննդամթերքի և սննդամթերքի անվտանգության ոլորտներում սպառողների պաշտպանության համապատասխան հայեցակետերի վերաբերյալ:
- **Օգնել** հայաստանյան ձեռնարկություններին՝ **ավելի արդյունավետորեն հարմարվելու**, որ կարողանան մուտք գործել ԵՄ շուկա՝ ուշադրություն դարձնելով սննդամթերքի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին:
- Համագործակցել **կենդանիների բարեկեցության** ապահովման և անասնաբուծության մեջ հակաբիոտիկների օգտագործման կրճատման ուղղությամբ՝ հակաբիոտիկների նկատմամբ դիմակայունության դեմ պայքարի նպատակով:
- Սահմանել լրացուցիչ **Հայաստան-ԵՄ հավաստագրեր**՝ Հայաստանի ներկրման պահանջներն ավելի թափանցիկ դարձնելու համար:

2.5.4. Ծառայությունների առևտուր և էլեկտրոնային առևտուր

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Պարբերաբար փոխանակել տեղեկություններ **փոստային ծառայությունների** մասին օրենսդրության կարգավորիչ մոտարկման ընթացքի վերաբերյալ՝

ՀԸԳՀ-ի շրջանակներում ստանձնած հանձնառություններին համապատասխան։

- Փոխանակել տեղեկություններ **Ծառայությունների մասով ներքին կարգավորումների** վերաբերյալ՝ ԱՀԿ համատեղ հայտարարության համապատասխան նախաձեռնության համաձայն, որի արդյունքում Հայաստանը միացել է նախաձեռնությանը։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Համագործակցել **Հայաստանի ծառայությունների առևտրի** ծավալներն **ընդլայնելու համար,** մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, ֆինանսները և մասնագիտական ծառայությունները՝ բարելավելով նորմատիվ իրավական դաշտը և ամրապնդելով ԵՄ չափանիշների ու օրենսդրության հետ համապատասխանեցումը։
- Իրականացնել **թվային տնտեսությանը** վերաբերող նորմատիվ իրավական հարցերի վերաբերյալ տեղեկությունների և փորձի փոխանակում։

2.5.5. Մտավոր սեփականության իրավունք (ՄՍԻ)

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Առաջ մղել աշխարհագրական ցուցիչների ենթակառուցվածքի և որակի վերահսկողության համապատասխան մեխանիզմների զարգացումը՝ **հայկական բրենդիի** պատշաճ որակն ապահովելու նպատակով։ Խթանել շուկայագիտական նախաձեռնությունները նոր շուկաներում՝ հայկական բրենդիի արտահանման դիվերսիֆիկացումն ապահովելու նպատակով։
- Ապահովել, որ և՛ ԵՄ-ի, և՛ Հայաստանի իրավատերերի մտավոր սեփականության իրավունքները պաշտպանվեն և իրացվեն բարձր մակարդակով։ Բարելավել մտավոր սեփականության իրավունքների

իրացման մեխանիզմները, հավաքել տեղեկություններ՝ մտավոր սեփականության խախտումների վերաբերյալ, և փոխանակել դրանք Հայաստանի հետ:

- Ձեռնարկել արդյունավետ միջոցներ **կեղծարարության և հեղինակային իրավունքների խախտումների** դեմ պայքարի ուղղությամբ, ներառյալ՝ դրանց վերաբերյալ վիճակագրական տեղեկությունների մշակումը, որոնք պետք է փոխանակվեն ԵՄ-ի և Հայաստանի միջև:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Բարձրացնել հանրային իրազեկվածությունը՝ **մտավոր սեփականության պաշտպանության** և օգտագործման վերաբերյալ, և ապահովել արդյունավետ երկխոսություն իրավատերերի և օգտագործողների միջև:

2.5.6. Առևտուր և կայուն զարգացում

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Վերանայել և ընդունել **Առևտրի և կայուն զարգացման** (ԱԿԶ) ճանապարհային քարտեզն, այդ թվում՝ իրականացման կոնկրետ առաջնահերթությունները և հետևել դրանց իրականացմանը:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ապահովել **Բնապահպանական բազմակողմ համաձայնագրերի** (ԲԲՀ-ներ) և **Կլիմայի վերաբերյալ կոնվենցիաների** արդյունավետ իրականացումն ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ գործնականում:

- Շարունակել ամրապնդել «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (**CITES**) կիրառման արդյունավետությունը, մասնավորապես՝ այն տեսակների համար, որոնց առևտուրը ԵՄ-ի հետ իրականացվում է զգալի ծավալներով:

- Շարունակել ամրապնդել **աշխատանքային իրավունքների** ապահովումն ու

վերահսկողությունն՝ ԱՄԿ հիմնարար կոնվենցիաներին համապատասխան, այդ թվում՝ աշխատանքի տեսչության կարողությունների ընդլայնման և եռակողմ խորհրդակցությունների միջոցով։

- Շարունակել **երկխոսությունն** առևտրի և կայուն զարգացման մասով ստանձնած հանձնառությունների իրականացման, այդ թվում՝ շահագրգիռ կողմերի ներգրավման շուրջ։

2.5.7. Պետական գնումներ

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Շարունակել ներդնել պետական գնումների **ճանապարհային քարտեզը**։
- Փոխանակել վիճակագրական տվյալներ՝ Հայաստանում պետական գնումների **վերահսկողության** վերանայված **համակարգի** գործունեության վերաբերյալ։
- Տրամադրել ճշգրիտ և օպերատիվ տեղեկություններ՝ գնումների քաղաքականության և դրա իրականացման վրա ազդող **պլանավորված օրենսդրական աշխատանքների**, ինչպես նաև օրենսդրական զարգացումների և պետական գնումների ինստիտուտների ստեղծման մասին։
- Լրամշակել, ընդունել և իրականացնել **«Պետական գնումների մասին» նոր օրենքը**, ներառյալ՝ էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը և սև ցուցակում ընդգրկելու ընթացակարգերի բարելավումը։
- Ձեռնարկել միջոցառումներ՝ գնումների գործընթացն **ավելի մրցունակ** դարձնելու և մեկ աղբյուրից կատարվող գնումների մասնաբաժինը նվազեցնելու համար։

2.6. Մարդկանց միջև շփումներ

Կողմերը կշարունակեն համագործակցությունն՝ **առավելագույնի հասցնելու այն առավելությունները**, որ Հայաստանն ստանում է «մարդկանց միջև շփումների»

շրջանակում իր մասնակցությունից, այդ թվում՝ որպես ասոցացված երկիր «Հորիզոն Եվրոպա» ծրագրում: Կողմերը կշարունակեն ակտիվ համագործակցությունը «Էրազմուս+», «Եվրոպական համերաշխության կորպուս», «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարածաշրջանային այնպիսի նախաձեռնություններում, ինչպիսիք են «EU4Youth», «Ստեղծագործ Եվրոպա», «Երիտասարդ եվրոպական դեսպաններ», «EU4Culture» նախաձեռնությունները և այլ կամավորական, համագործակցության և փոխանակման ծրագրեր, որոնք իրականացվում են Արևելյան գործընկերության հովանու ներքո: Հայաստանն և ԵՄ-ն ընդգծում են **երիտասարդների** և երիտասարդական կազմակերպությունների կարևոր դերը կենսունակ և ներառական քաղաքացիական հասարակության ձևավորման գործում: Կողմերը կամրապնդեն նաև մշակութային կապերը: Կշարունակվի խրախուսվել համագործակցությունը մասնագիտական կրթության և ուսուցման (**ՄԿՈՒ**) ոլորտում, մասնավորապես՝ «Էրազմուս+» ծրագրի շրջանակում, ինչպես նաև աշկերտության և աշխատանքահեն ուսուցման ուղղությամբ՝ Աշկերտության եվրոպական դաշինքի ներքո, որին Հայաստանը միացել է 2023 թվականի հոկտեմբերին:

2.6.1. Հետազոտական, տեխնոլոգիական զարգացում և նորարարություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Համագործակցել հետազոտական և նորարարական քաղաքականության բարեփոխումների մշակման և իրագործման ուղղությամբ, ներառյալ՝ հետազոտական և նորարարական գործունեության ոլորտի նորմատիվ իրավական կարգավորումների շրջանակի վերանայումը և Հայաստանի համար **հետազոտական ենթակառուցվածքների ճանապարհային քարտեզի** մշակումը:
- Ընդունել **հետազոտությունների և նորարարության ազգային ռազմավարություն**: Ապահովել «Բարձրագույն կրթության և հետազոտությունների մասին» **օրենքի** ընդունումն ու իրականացումը:

- Շարունակել ակտիվ համագործակցությունը **«Հորիզոն Եվրոպա»** ծրագրի հարցերով ասոցացման համաձայնագրի շրջանակում և ընդլայնել Հայաստանի մասնակցությունը, մասնավորապես՝ արդյունաբերության և մասնավոր հատվածի ավելի լայն ներգրավվածությունը։
- Շարունակել ապահովել Հայաստանի ակտիվ մասնակցությունն ու ինտեգրումը **Եվրոպական հետազոտական տարածքին (ԵՀՏ)**։
- Ապահովել **2020 թվականի՝ Քաղաքականության աջակցության հիմնադրամի** առաջարկությունների և հարակից գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումը։
- Ընդլայնել **«Մարի Սկլոդովսկա-Կյուրիի գործողություններ»** (MSCA) ծրագրին մասնակցությունը՝ հնարավորություն տալով հայ հետազոտողներին զարգացնելու աշխատաշուկայի կարիքներին համապատասխան հմտություններ, իրականացնել նորարարություններ, նպաստել երկրի հետազոտական և նորարարական կարողությունների ամրապնդմանը, ինչպես նաև պայմաններ ստեղծել միջազգային ռազմավարական գործընկերությունների, հետազոտողների վերապատրաստման և հայաստանյան ու ԵՄ հաստատությունների միջև փոխանակումների համար։
- Առավել ուժեղացնել Հայաստանի մասնակցությունը **Եվրոպական նորարարության խորհրդի (ԵՆԽ)** ֆինանսական գործիքներին՝ ամրապնդելու համար նրա սթարթափ էկոհամակարգը՝ նպաստելով տնտեսական կայուն զարգացմանը, խթանելով կանանց ձեռներեցությունն, ապահովելով կանաչ և թվային անցում և ստեղծելով լայնամասշտաբ հնարավորություններ խոշոր ազդեցություն ունեցող նորարարական առաջնահերթությունների համար։

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Համագործակցել **«Ակադեմիական քաղաք» նախագծի** իրագործման ուղղությամբ՝ որպես կլաստերների համալիր, որը կստեղծի որակյալ

բարձրագույն կրթության և հետազոտությունների բարենպաստ միջավայր՝ երկարաժամկետ կայուն զարգացման համար նորարարական էկոհամակարգը խթանելու նպատակով:

- Զարկ տալ մարդկային, նյութական և ինստիտուցիոնալ ռեսուրսներին՝ **հետազոտական և նորարարական կարողությունների** լավարկման նպատակով:

2.6.2. Կրթություն, ուսուցում և երիտասարդություն

Կարճաժամկետ առաջնահերթություններ

- Լիարժեքորեն իրականացնել **Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը** և դրան ուղեկցող գործողությունների ծրագիրը, ներառյալ՝ երիտասարդական քաղաքականության, նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթության, այդ թվում՝ մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ), ինչպես նաև ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման ոլորտներում:
- Կատարել գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի (**ԳՏՃՄ**) ոլորտներում իրականացված փորձնական ծրագրի արդյունքների համազգային գործարկում:
- Երիտասարդների հետ համակողմանի խորհրդակցություններից հետո ընդունել և լիարժեք կերպով իրականացնել **«Երիտասարդության մասին» օրենքը**՝ կիրառելով լավագույն միջազգային փորձն ու չափանիշները:
- Խթանել Հայաստանի ակտիվ մասնակցությունն **«Էրազմուս+»** ծրագրի միջազգային տարաբնույթ նախաձեռնություններին՝ ուսանողների և աշխատակիցների շարժունակությունը բարձրացնելու, բարձրագույն կրթության հաստատությունների կարողություններն ընդլայնելու և բարձրագույն **կրթության** համակարգն արդիականացնելու, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների կարողությունների զարգացմանն աջակցելու նպատակով: Ընդլայնել

Հայաստանի մասնակցությունն **Աշկերտության եվրոպական դաշինքին**:

- Շարունակել ամրապնդել համագործակցությունը **Եվրոպական կրթական հիմնադրամի** հետ:
- Խթանել Հայաստանի ակտիվ մասնակցությունը **«Էրազմուս+» ծրագրին՝ երիտասարդների շարժունակությունը բարձրացնելու**, երիտասարդության և սպորտի ոլորտներում միջազգային համագործակցությանն աջակցելու, ինչպես նաև այդ ոլորտներում գործող հայկական կազմակերպությունների կարողություններն ուժեղացնելու նպատակով:
- Խթանել Հայաստանի մասնակցությունը **«Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրին**, ինչպես նաև կրթության, ուսուցման և երիտասարդության ոլորտներում այլ կամավորական, համագործակցության և փոխանակման ծրագրերի:
- Խթանել Հայաստանի ակտիվ մասնակցությունն **Արևելյան գործընկերության տարածաշրջանային ծրագրերին և նախաձեռնություններին**, ինչպես օրինակ՝ «EU4Youth» և «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» ծրագրերը:
- Շարունակել կրթության ոլորտի շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ զարգացման հարցերով գործընկերների միջև ընթացող **երկխոսությունը**՝ կրթական բարեփոխումների շուրջ Հայաստան-ԵՄ ռազմավարական քաղաքականության մշակման հարցերով կանոնավոր երկխոսության միջոցով:

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- «Երիտասարդության մասին» օրենքի ընդունումից հետո ընդունել և իրագործել **ազգային մակարդակի համակարգված ռազմավարական պլան** երիտասարդական խնդիրների վերաբերյալ՝ դիտարկելով դրանք որպես միջոլորտային առաջնահերթություն:

- Ապահովել **որակյալ կրթության** իրավունքը բոլորի համար, ներառյալ՝ սոցիալապես խոցելի խմբերի համար, և ձեռնարկել լրացուցիչ քայլեր՝ խթանելու ներառական կրթությունն ու ուսուցումը՝ կրթության վերաբերյալ ռազմավարությանը համապատասխան։
- Ապահովել **երիտասարդների՝** առավել կառուցվածքային ներգրավվածությունն **աշխատանքում**, այդ թվում՝ խոցելի խմբերի երիտասարդների համար թվային հմտությունների վրա հիմնված զբաղվածության գործընկերությունների միջոցով, ինչպես նաև կլիմայի առումով չեզոք տնտեսության համար երիտասարդական ձեռներեցության ծրագրերի միջոցով։
- ՄԿՈՒ ոլորտում ներդնել **որակավորման ծրագրեր** և համապատասխան ուսումնական ծրագրեր, ներառյալ՝ ձեռներեցությունը, և մշտադիտարկել ձեռներեցության առանցքային հմտությունների համար մոդուլների ներդնումը։
- Համապատասխանեցնել **ՄԿՈՒ մասնագիտություններն** ու ՄԿՈՒ հաստատությունների կողմից ուսուցանվող **հմտություններն** աշխատաշուկայի պահանջներին՝ համապատասխանեցնելով դրանք տնտեսության առաջնահերթ ոլորտներին և տարածաշրջանային զարգացման ծրագրերին, ինչպես նաև ուժեղացնելով աշխատանքահեն ուսուցումը։
- Շարունակել բարձրացնել **կրթության որակը**, դրա հավասար **հասանելիությունն** ու **կայունությունը** (ներառյալ՝ կրթության բոլոր մակարդակների համար ֆինանսավորման արդյունավետ ապահովումը) և խթանել **ոչ ֆորմալ կրթությունն ու ամբողջ կյանքի ընթացքում ուսուցումը**։

2.6.3. Մշակույթի և սպորտի ոլորտներում համագործակցություն

- Համագործակցել **ներառական մշակութային քաղաքականությունների** մշակման և իրագործման շուրջ, այդ թվում՝ դրա տարածաշրջանային և էթնիկ բազմազանության ու ավանդույթների, ինչպես նաև մշակութային և

ստեղծարար արդյունաբերությունների մասով՝ սատարելու համար սոցիալ-տնտեսական զարգացումը, ներառականությունն ու քաղաքացիների մասնակցությունն, այդ թվում՝ որպես գործող երկկողմ և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող տարածաշրջանային ծրագրերի մաս։

- Ապահովել ակտիվ մասնակցությունն ու համագործակցությունը մշակույթի ոլորտում՝ **ԵՄ ծրագրերի** աջակցությամբ։
- Ընդլայնել հայաստանյան մշակութային գործիչների մասնակցությունը մշակութային համագործակցության ծրագրերում, մասնավորապես՝ **«Ստեղծագործ Եվրոպա»** ծրագրում։ Աշխատանքներ տանել **Զանգվածային լրատվության մասին օրենսդրությունը** «Տեսալսողական մեդիա ծառայությունների մասին» ԵՄ թիվ 2010/13 դիրեկտիվին համապատասխանեցնելու ուղղությամբ՝ ծրագրի մեդիա բաղադրիչին և միջոլորտային բաղադրիչներին մասնակցելու հնարավորություն ունենալու նպատակով։
- Շարունակել կրթություն, ձեռնարկատիրական հմտություններ և տեսանելիություն ունեցող **ստեղծարար մասնագետների և կազմակերպությունների հզորացմանն** ուղղված համագործակցությունը՝ Հայաստանում կայուն և բարգավաճ մշակութային արդյունաբերություն ձևավորելու նպատակով։
- Համագործակցել Հայաստանում **սպորտային քաղաքականության** զարգացման հարցերի շուրջ՝ լավագույն գործելակերպերի փոխանակման և սպորտի՝ որպես առողջ ապրելակերպի կարևոր բաղադրիչ, խթանման միջոցով։
- Խրախուսել Հայաստանի մասնակցությունը **«Էրազմուս» սպորտային** միջոցառումներին, ինչպես նաև այնպիսի այլ նախաձեռնությունների, ինչպիսին է **«Եվրոպական սպորտի շաբաթ»** ծրագիրը։
- Հայաստանի օրենսդրությունը համապատասխանեցնել **սպորտային էթիկայի**

ոլորտում լավագույն գործելակերպերին:

2.6.4. Տեսալսողական և մեդիա համագործակցություն

Միջնաժամկետ առաջնահերթություններ

- Ամրապնդել **ԶԼՄ-ների անկախությունն** ու **լրագրողների անվտանգությունը՝** եվրոպական չափանիշներին համապատասխան, ԶԼՄ-ների ազատության, տեսալսողական քաղաքականության և համապատասխան միջազգային չափորոշիչների վերաբերյալ տեսակետների փոխանակման, այդ թվում՝ ատելություն և բռնություն հրահրելու դեմ պայքարի հարցում համագործակցության միջոցով:
- Պարբերաբար իրականացվող երկխոսության միջոցով փոխանակել **լավագույն գործելակերպեր՝** ԶԼՄ-ների ազատության, մեդիայի բազմակարծության վերաբերյալ, այդ թվում՝ վարկաբեկման ապաքրեականացման, լրագրողական աղբյուրների պաշտպանության և մեդիայի մշակութային բազմազանության հայեցակետերի հարցերում:
- Մեդիա սեփականությունը դարձնել ավելի **թափանցիկ**:
- Ամրապնդել **կարգավորող մարմինների/լրատվական գործունեություն իրականացնող մարմինների** կարողություններն ու անկախությունը:

Եզրակացություն

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգը երկու կողմերի միջև հարաբերությունների **զարգացմանն ուղղված կարևոր քայլ** է: Այն կառուցված է **ՀԸԳՀ հիմքի** վրա՝ սահմանելով **հավակնոտ առաջնահերթություններ** մի շարք ոլորտներում: Օրակարգն **ընդհանուր արժեքների ու փոխադարձ շահերի** արտացոլումն է և Հայաստանի և ԵՄ-ի կողմից **բոլոր ոլորտներում համագործակցությունը խորացնելու** հանձնառության վկայությունը:

Այս օրակարգի առանցքային բաղադրիչն **արդյունավետ կառավարման, մարդու իրավունքների և օրենքի գերակայության** կարևորումն է: Այն միտված է ուժեղացնելու Հայաստանի ինստիտուտները և ձևավորելու ավելի արդար և անաչառ հասարակություն՝ եվրոպական բարձրագույն չափանիշներին համապատասխան: Այս շեշտադրումը կարևոր նշանակություն ունի կայուն զարգացման և առաջընթացի համար հող նախապատրաստելու հարցում:

Տնտեսական համագործակցությունն, առևտրի դիվերսիֆիկացումն ու փոխկապակցվածությունը նույնպես օրակարգի առանցքային հենասյուներից են: Համատեղ գործողությունների միջոցով Հայաստանը և ԵՄ-ն կարող են բացահայտել տնտեսական աճի նոր հնարավորություններ, ստեղծել աշխատատեղեր, բարձրացնել բարեկեցության մակարդակն ու բարելավել բնակչության կյանքի որակը: Այս համատեքստում Հայաստանի «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը ևս մեկ անգամ ընդգծում է Հայաստանի՝ որպես տարբեր տարածաշրջանների միջև կամուրջ հանդես գալու ներուժը՝ նպաստելով տարածաշրջանային ներառական փոխկապակցվածությանը և համագործակցությանը՝ «ԵՄ գլոբալ դարպասներ» ռազմավարության նպատակներին համապատասխան: Այն համահունչ է նաև Հանձնաժողովի և ԵՄ բարձր ներկայացուցչի՝ Սևծովյան տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի ռազմավարական մոտեցման վերաբերյալ համատեղ հաղորդագրության՝ «Աճ և բարգավաճում» հենասյանը:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում անդրադարձ է արվում նաև **սոցիալ-տնտեսական կարևորագույն մարտահրավերներին**, մասնավորապես՝ կանանց և աղջիկների, ինչպես նաև խոցելի իրավիճակում գտնվող անձանց, ինչպես օրինակ՝ Ադրբեջանի ռազմական գործողություններից հետո տեղահանված Ղարաբաղի հայերի սոցիալական ներառման խնդրին:

Առևտրային հարաբերությունների ամրապնդմամբ, առևտրին առնչվող քաղաքականությունների արդիականացմամբ և մոտարկմամբ ԵՄ-ն և Հայաստանը

նպատակ ունեն դիվերսիֆիկացնելու երկրի տնտեսությունը, ներգրավելու ներդրումներ, բարձրացնելու հայկական արտադրանքի չափանիշները, ընդլայնելու արտահանման կարողությունները և ստեղծելու շուկայական նոր հնարավորություններ: Նորմատիվ իրավական համապատասխանեցման կարևորությունը, հատկապես մաքսային ոլորտի արդիականացման, տեխնիկական չափանիշների և սննդամթերքի անվտանգության կարգավորումների ոլորտներում, ընդգծում է ԵՄ-ի դերը Հայաստանի՝ եվրոպական շուկա մուտք գործելու գործընթացում աջակցելու առումով:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգով առաջնահերթությունը տրվում է նաև **արտաքին, անվտանգության և պաշտպանական քաղաքականության** ոլորտներում համագործակցությանը, ներառյալ՝ տարածաշրջանային անվտանգությունը, ճգնաժամային կառավարումն, անվտանգության ոլորտի բարեփոխումները, կիբեռանվտանգությունը և հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարը, ինչն արտացոլում է դիմակայունության, կայունության և խաղաղության ամրապնդմանն ուղղված ընդհանուր հանձնառությունը: Համագործակցությունը հիմնված է ընդհանուր արժեքների վրա, ներառյալ՝ ՄԱԿ-ի կանոնադրության և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի նպատակներին ու սկզբունքներին հավատարմությունը:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգով ճանաչվում է **շարժունակության և մարդկանց միջև շփումների** կարևորությունը՝ **խթանելով կրթության, հետազոտական և նորարարության ոլորտներում իրականացվող փոխանակումները**: Այս փոխանակումները կխթանեն ավելի բարձր շարժունակությունը, կխորացնեն փոխադարձ ըմբռնումը և Հայաստանի և ԵՄ քաղաքացիների միջև կձևավորեն երկարաժամկետ կապ:

ԵՄ-ն պատրաստակամություն է հայտնել Հայաստանին **տրամադրելու օգնություն, փորձագիտական աջակցություն և լավագույն գործելակերպեր**՝ Հայաստանի կողմից այս առաջնահերթությունների իրականացումն ապահովելու

նպատակով, ինչպես նաև միջազգային առկա գործիքների մոբիլիզացման հարցերով համագործակցելու համախոհ գործընկերների հետ՝ անդամ պետությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ փոխգործակցության միջոցով: Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական այս օրակարգի հաջողության գրավականը երկուստեք գործադրվող ջանքերն են: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել շարունակական **երկխոսություն, արդյունավետ համակարգում և** ցուցաբերել նոր մարտահրավերներին ու հնարավորություններին հարմարվելու **պատրաստակամություն**:

Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգն արտացոլում է նաև **հայ ժողովրդի եվրոպական նկրտումները** և Հայաստանի ժողովրդավարական զարգացմանը, ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը և սոցիալ-տնտեսական դիմակայունությանն **աջակցելու ԵՄ-ի հանձնառությունը**: ԵՄ-ն բարձր է գնահատում Հայաստանի հավատարմությունը եվրոպական արժեքներին և եվրոպական ընտանիքի հետ ինտեգրումը խորացնելու նրա ձգտումը:

Հայաստան-ԵՄ գործընկերությունը գտնվում է շրջադարձային փուլում: Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգով սահմանվում է ապագայի վերաբերյալ մեր ընդհանուր տեսլականը, որում արտացոլվում է տարածաշրջանում կայունությունը, բարեկեցությունը և խաղաղությունն ամրապնդելու ընդհանուր հանձնառությունը, և որում առկա է շոշափելի արդյունքներ ձեռք բերելու խոստում: Համատեղ աշխատանքի միջոցով ԵՄ-ն և Հայաստանը կարող են իրականացնել սույն օրակարգում ամրագրված հավակնոտ նպատակները՝ **ստեղծելով ավելի բարեկեցիկ և ապահով ապագա բոլորի համար**: